ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

7 (86)

ԵՐԵՎԱՆ

2017

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 7 (86), 2017

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ.Դանիելյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
ՀՀ վարչապետ, տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ս.գ.թ.

Վահագն Ազլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ
Սամվել Մանուկյան
Վահագն Ազլյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Վահրամ Հովյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 7 (86), 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
Տեղեկատվական անվտանգության որոշ խնդիրների վերաբերյալ 5

Արա Մարջանյան
Ֆիքսված լայնաշերտ կապը Հայաստանում և տարածաշրջանում. փաստեր 14

Սամվել Մարտիրոսյան
Հայաստանը կիբեռանվտանգության
միջազգային վարկանիշային համակարգում 27

Ռոման Կարապետյան
Արցախի Հանրապետության
արտաքին քաղաքականության առանձնահատկությունները 31

Վահրամ Հովյան
ԱՄՆ հայ համայնքի գիտական ներուժի շուրջ 38

Գեորգի Կոլարով
Ադրբեջանի դեսպանությունը Սոֆիայում՝ զենքի վաճառքի համատեքստում 46

Հուշագիր հեղինակին 54

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գագիկ Հարությունյան[*]

Անվտանգություն հասկացությունը, թվացյալ պարզության հետ մեկտեղ, խիստ ընդգրկուն է և գործնականորեն ներառում է հասարակության ու առանձին անհատների կենսագործունեության բոլոր ոլորտները։ Ամենևին պատահական չէ, որ գրականության մեջ կարելի է հանդիպել այդ եզրի ամենատարբեր մեկնությունների և սահմանումների։ Օրինակ, հաճախ կարելի է հանդիպել հետևյալ ձևակերպմանը. «Ազգային անվտանգությունն ազգի ընդունակությունն է՝ պահպանելով իր հիմնարար արժեքները հնարավորինս նվազագույն կորուստներով՝ բավարարել այն պահանջները, որոնք անհրաժեշտ են ինքնապաշտպանության, ինքնավերարտադրման և ինքնակատարելագործման համար»։ Լինելով բավական ընդգրկուն՝ այս սահմանումը, միևնույն ժամանակ, փոքր-ինչ ստատիկ բնույթ է կրում և լիարժեք չի արտահայտում հարափոփոխ միջավայրի ազդեցությունները։ Այդ իսկ պատճառով անդրադառնանք նաև անվտանգության փիլիսոփայության ստեղծման գործում մեծ ավանդ ունեցող Առնոլդ Թոյնբիի ձևակերպումներին [1]։

Եթե փորձենք փոքր-ինչ ընդհանրացնել Թոյնբիի դասական մոտեցումները, ապա քաղաքակրթությունների, պետությունների, հասարակությունների և անգամ անհատների անվտանգությունն ապահովվում է նրանց՝ մարտահրավերների և դրանց տրվող պատասխանների բարդ համակարգում գործելու ունակությամբ։ Հայտնի է Թոյնբիի ասույթը, թե քաղաքակրթությունների կործանման պատճառը եղել է նրանց անկարողությունը՝ ադեկվատ արձագանքելու իրենց նետված մարտահրավերներին։ Նկատենք, սակայն, որ մարտահրավերները որոշ իրադրություններում կարող են ընկալվել նաև որպես դրական հանգամանք, քանի որ դրանք

[*] «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն։

փորձարկում են անվտանգության համակարգի հուսալիությունը և, մարտահրավերներին արժանիորեն դիմագրավելու նպատակով, մոբիլիզացնում են հանրության հոգևոր, մտավոր, ռազմաքաղաքական ու նյութական ռեսուրսները:

Թոյնբիի վերոնշյալ դատողությունները կիրառելի են նաև տեղեկատվական անվտանգության *(ՏԱ)* ոլորտում: Վերջինիս շրջանակները երբեմն նեղացվում են, մինչդեռ այն ծավալուն հասկացություն է և առաջին մոտավորությամբ ներառում է այն ամենը, ինչ վերաբերում է.

- ազգի, պետության, հասարակության և անհատի հոգևոր-հոգեբանական, մտավոր, գիտելիքային և կրթական ոլորտների արդյունավետ զարգացման, կառավարման ու ապահովության խնդիրներին;
- պետության, հասարակության և անհատի տեղեկատվական-տեխնոլոգիական համակարգերի արդյունավետ զարգացման ու ապահովության խնդիրներին:

Այս և նման մոտեցումների հիման վրա մասնագիտական գրականությունում առաջարկվել են *ՏԱ* բազմաթիվ սահմանումներ: Օրինակ՝ «Տեղեկատվության և այն ապահովող ենթակառուցվածքների պաշտպանվածությունը պատահական կամ միտումնավոր ազդեցություններից»: *ՏԱ-ն* սահմանվում է նաև որպես «Ներազդող սպառնալիքների և դրանց արդյունավետ հակազդելու գործընթացների միջև հավասարակշռության պահպանման գործընթաց»: Ելնելով Թոյնբիի անվտանգության փիլիսոփայության դրույթներից և շեշտելով անվտանգության խնդիրներում գիտակրթական-տեխնոլոգիական ռեսուրսների ու հանրության ընդհանրական հմտությունների որոշիչ կարևորությունը՝ *ՏԱ-ն* նպատակահարմար է սահմանել հետևյալ կերպ. «*Տեղեկատվական անվտանգությունը պետության և հասարակության գիտելիքային–տեխնոլոգիական անհրաժեշտ ռեսուրսների ստեղծման միջոցով հանրության անվտանգությունը և զարգացումն ապահովելու ունակությունն է տեղեկատվական մարտահրավերներ-պատասխաններ գործընթացում*» [2]:

Գիտելիքային գործոնի շեշտադրումը համահունչ է այն մոտեցումների հետ, համաձայն որոնց՝ արդի 5-րդ սերնդի պատերազմներում հաղ-

թանակի գրավականը գիտակցության մակարդակը և իմացական կարողություններն են [3]: Հատկանշական է նաև, որ ռազմավարական հետախուզության առաջնային խնդիրն է համարվում հակառակորդի գիտական ռեսուրսների և ներուժի վերաբերյալ տեղեկատվության հայթայթումը [4]:

Հայկական հանրության տեղեկատվական անվտանգության առանձնահատկությունները. *ՏԱ* ոլորտին վերաբերող խնդիրներում պետք է հաշվի առնել, որ դրանք միշտ չէ, որ ունիվերսալ բնույթ են կրում, քանի որ հաճախ վճռորոշ նշանակություն ունի այն քաղաքակրթական միջավայրը, որում կիրառվում են *ՏԱ* այս կամ այն դրույթները: Օրինակ, Հայկական հանրությանը վերաբերող *ՏԱ* խնդիրներում անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ իրողությունները.

- Հայաստանը ներկայացնում են երկու պետություններ՝ Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունը;
- Հայկական Սփյուռքը, սփռված լինելով տարբեր երկրներում, գտնվում է իր բնակության վայրի (օրինակ՝ Ռուսաստանի կամ ԱՄՆ-ի) քաղաքական, մշակութային և տեղեկատվական ազդեցության տակ;
- Հայկական հանրությունը ներառում է տարադավան (Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներից բացի առկա են նաև կաթոլիկություն, ուղղափառություն և բողոքականություն դավանող հայկական համայնքներ) և տարակրոն (Արևմտյան Հայաստանում և Մերձավոր Արևելքի որոշ երկրներում բնակվում են իսլամացված հայեր) հատվածներ: Հայկական հանրության այս հատվածներին բնորոշ են հոգեկերտվածքային բնույթի առանձնահատկություններ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել տեղեկատվական քաղաքականություն վարելիս;
- Պատմական Հայաստանի որոշ հատվածներում բնակվում են հայեր, որոնք ավանդաբար համարում են, որ ապրում են իրենց հայրենիքում (օրինակ՝ Ջավախքում, Արևմտյան Հայաստանի ու Մերձավոր Արևելքի որոշ շրջաններում), և այս գործոնը նույնպես պետք է ուշադրության արժանանա:

Ինչպես տեսնում ենք, *ՏՍ* տեսանկյունից Հայկական հանրությունն ունի բավական լուրջ հիմնախնդիրներ: Բնակության տարաբնույթ միջավայրերն առանձին հայկական համայնքներին և կազմակերպություններին երբեմն թելադրում են այս կամ այն ազգային խնդրի վերաբերյալ կիրառել տեղեկատվական քաղաքականություն, որը միշտ չէ, որ համընկնում է հայկական հանրության այլ հատվածների մոտեցումների հետ: Միևնույն ժամանակ, նման մարտավարական տարաձայնությունները նույնպես կարելի է ընդունել և օգտագործել որպես տեղեկատվական ռեսուրս: Ընդհանրական գաղափարա–տեղեկատվական դաշտի առկայության, ինչպես նաև արդի համացանցային համագործակցության հնարավորությունների լիարժեք օգտագործման պարագայում այդ բազմակարծությունը կարելի է և անհրաժեշտ է ծառայեցնել հայկական պետությունների ու հանրության շահերին: Ավելին, տեղեկատվական ռեսուրսների նման «սփռվածությունը» և «ցանցային» բնույթը որոշակի առավելություններ են ընձեռում հայկական հանրությանը, որին չեն տիրապետում մեր որոշ մրցակիցները:

Բոլոր պարագաներում ակնհայտ է, որ տեղեկատվական անվտանգության մշակվող կամ առաջարկվող «հայկական» հայեցակարգերը պետք է հաշվի առնեն վերոնշյալ կարևոր հանգամանքները, այլապես չեն կարող լիարժեք համարվել: Մինչդեռ Սփյուռքի տեղեկատվական ռեսուրսների հաշվառումը և համապատասխան օգտագործումը կնպաստեն, որպեսզի ողջ Հայկական հանրությունն արժանավայել պատասխանի անվտանգության բազում մարտահրավերներին, որոնցից շատերը տեղեկատվական բնույթի են:

Ինֆոգեն քաղաքականության դերակատարները և մարտահրավերները. Ինչպես հայտնի է, Տրոյան գրավելու համար բավական էր, որ Ոդիսևսն ունենար ընդամենը մեկ ազդեցության գործակալ և ագիտատոր՝ Սինոնին, որը կարողացավ համոզել իր համաքաղաքացիներին «փայտե նժույգը» մտցնել քաղաք: Տեղեկատվական հինգերորդ հեղափոխության դարաշրջանում իրավիճակը կտրուկ փոխվել է: Համացանցի և մոբիլ կապի համակարգում այսօր ընդգրկված է գրեթե ողջ մարդկությունը (որի

մի զգալի մասը ներգրավված է սոցիալական ցանցերում), իսկ կայքերի թիվը մոտենում է 2 մլրդ-ի: Զուգահեռ՝ զարգանում են նաև ավանդական լրատվամիջոցները՝ մամուլը, ռադիոն և հեռուստատեսությունը, որոնք հաճախ խաչաձևվում և միասնություն են կազմում հաղորդակցման ինտերնետային միջոցների հետ: Ստեղծված իրավիճակն առաջին հերթին նպաստում է մարդկության տեղեկատվայնացման (ինֆորմատիզացիայի) աննախադեպ բարձրացմանը և գիտելիքների ազատ շրջանառությանը, ինչն, իհարկե, խիստ դրական երևույթ է:

Միևնույն ժամանակ, ռազմաքաղաքական գործընթացների տեսանկյունից տեղեկատվության նման լայնածավալ շրջանառությունը նոր հնարավորություններ է ստեղծում քաղաքական դերակատարների համար: Ավանդաբար ընդունված է համարել, որ գլոբալ տեղեկատվական տարածքն արտացոլում է առաջատար պետությունների տեղեկատվական հնարավորությունները: Սակայն այդ տարածքում, հաշվի առնելով արդի աշխարհակարգի բազմակենտրոն լինելը, տեղ են գտել ինչպես մեծ ներուժ չունեցող պետությունները, այնպես էլ ոչ պետական կառույցները *(ՈՊԿ)*: Վերջիններս չունեն պետություններին բնորոշ կառավարման ինստիտուտներ, սակայն տիրապետում են անհրաժեշտ մտավոր, նյութական, կազմակերպչական ռեսուրսների և մասնավորապես՝ տեղեկատվական ոլորտում արդյունավետ գործելու կարողությունների: Այդպիսի հնարավորություններ կարող են ունենալ հետևյալ տիպի կառույցները և կազմակերպությունները.

1. Խոշոր անդրազգային տնտեսական-ֆինանսական կառույցները[1];
2. Զանգվածային լրատվամիջոցների տիրապետող կառույցները՝ այսպես կոչված «մեդիա-հոլդինգները»;
3. Հասարակական, քաղաքական և կրոնական բնույթի կազմակերպությունները;
4. Ահաբեկչական և հանցավոր կազմակերպությունները;

[1] Ըստ 2011թ. շվեյցարացի հետազոտողների կատարած ուսումնասիրության, նման *ՈՊԿ*-ների միջուկն են կազմում հիմնականում ֆինանսական 147 կորպորացիաներ, որոնք իրենց գործընկերների և մասնաճյուղերի հետ միասին վերահսկում են համաշխարհային ՀՆԱ 60%-ը (http://www.newscientist.com/article/mg21228354.500-revealed—the-capitalist-network-that-runs-theworld. html#.UfALvsCGiJd).

5. Այս կամ այն հատկանիշով միավորված ոչ պաշտոնական խմբերը (համաձայն որոշ հետազոտողների՝ այդպիսի խմբեր կարող են համարվել, օրինակ, միջազգային բյուրոկրատիայի որոշ հատվածները, որոնք երբեմն մեծ եռանդով պաշտպանում են սեփական կորպորատիվ շահերը)։

ՈՊԿ-ների դերակատարումը գնահատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ նրանց մի մասը համագործակցում է պետական համակարգերի հետ հետևյալ երկու հիմնական մեխանիզմներով.

1. *ՈՊԿ-ներն* ուղղակիորեն կամ անուղղակիորեն ֆինանսավորվում և ուղղորդվում են պետության կողմից և այդպիսով համատեղ իրագործում են տարաբնույթ ծրագրեր պետական շահերի համատեքստում։ Միջնորդված տեղեկատվական-քաղաքական տեխնոլոգիաները երբեմն ավելի արդյունավետ են, քանի որ *ՈՊԿ*-ները կաշկանդված չեն իրենց գործառույթներում պետական պարտավորություններով, իսկ նրանց «անկախ դիրքորոշումները» լրացուցիչ հիմնավորում են հանդիսանում այս կամ այն հարցի շուրջ ընթացող քննարկումներում և գործընթացներում։ Առավել հաճախ նման եղանակով են գործում *ՀԿ*-ները։ Այս խնդրում պետք է նաև հաշվի առնել, որ որոշ կայացած *ՀԿ*-ներ, ժամանակի ընթացքում ձեռք բերելով անհրաժեշտ ռեսուրսներ, փորձում են վարել, մասնավորապես՝ տեղեկատվական ոլորտում, ավելի ինքնուրույն, պետական համակարգի հետ չհամաձայնեցված քաղաքականություն։
2. *ՈՊԿ*-ներն ունեն ինքնուրույն գործելու բավարար ռեսուրսներ, սակայն նրանց շահերը որոշակի ուղղություններում համընկնում են պետական շահերի հետ, և սա հատկապես վերաբերում է խոշոր անդրազգային տնտեսական-ֆինանսական կառույցներին և մեդիահոլդինգներին։ Նման *ՈՊԿ*-ների գործունեությունը հաճախ փոխհամաձայնեցվում է պետական ինստիտուտների հետ։

Միևնույն ժամանակ, խոշոր անդրազգային ֆինանսական ընկերությունների որոշակի մասը գործում է միանգամայն ինքնուրույն, և այստեղ պետք է կարևորել հետևյալ իրողությունը։

Ինքնուրույն դերակատարում ստանձնած հզոր կառույցներն ունեն իրենց սեփական՝ կորպորատիվ պատկերացումներն աշխարհակարգի, քաղաքականության, կառավարման մեթոդների և այլնի վերաբերյալ: Դրանք բովանդակային այս հարթությունում ոչ միայն մրցակցում են ազգային պետությունների հետ, այլև, համաձայն որոշ հետազոտողների, կարող են ստանձնել անգամ խոշոր պետությունների ուղղորդումը՝ իրականացնելով այսպես կոչված արտաքին կառավարում: Նման *ՈՊԿ*-ներին բնորոշ է նաև այն, որ գտնվելով պետական համակարգից դուրս՝ նրանք չեն կրում որևէ պատասխանատվություն որևիցե երկրի բնակչության հանդեպ: Արդի ժամանակաշրջանում, որը բնութագրվում է որպես *«պոստդեմոկրատական»,* նման խոշոր *ՈՊԿ*-ները գլոբալ դերակատարում են ձեռք բերել ինչպես տեղեկատվական դաշտում, այնպես էլ քաղաքական և տնտեսական հարթություններում [5]:

Բոլոր պարագաներում, և՛ պետական, և՛ ոչ պետական դերակատարները, ելնելով իրենց ազգային–պետական կամ կորպորատիվ շահերի վերաբերյալ պատկերացումներից, ձգտում են հասնել իրենց գաղափարախոսական, քաղաքական, ռազմական և տնտեսական նպատակներին՝ օգտագործելով տեղեկատվության հսկայական շրջանառության ընձեռած հնարավորությունները: Այդ համատեքստում, բնականաբար, *ՈՊԿ*-ները կատարում են որոշակի գործողություններ, որոնք ուղղված են իրենց պայմանական հակառակորդների և մրցակիցների դեմ: Տեղեկատվական բնույթի նման գործողությունները և սպառնալիքները, որոնք իրագործվում և ուղղորդվում են պետական և ոչ պետական կառույցների, ինչպես նաև առանձին անհատների կողմից, ընդունված է անվանել ինֆոգեն կամ տեղեկատվածին: Ինֆոգեն մարտահրավերները հիմնականում լինում են երկու տիպի.

1. *Հոգևոր-գաղափարախոսական* բնույթի ինֆոգեն սպառնալիքներ, որոնք ուղղված են ազգի, հասարակության ու անհատի դեմ, և որոնք ներազդողի շահերի համատեքստում ենթադրում են.

- խաթարել հանրության գիտակցությունը (երբեմն՝ անգամ ենթագիտակցության մակարդակով), հոգևոր և ազգային արժեհամակարգը,

- փոխել հասարակության և առանձին անհատների (այդպիսով՝ պետության) քաղաքական ու քաղաքակրթական կողմնորոշումները (այսպես կոչված «քաղաքակրթական կոդը»),
- նվազեցնել հասարակության և պետության ընդհանրական մտավոր-գիտելիքային ռեսուրսները և այդպիսով սահմանափակել տվյալ հանրության զարգացման հնարավորությունները։

2. *Տեխնոգեն բնույթի ինֆոգեն սպառնալիքներ*, որոնք ուղղված են անհատի, հասարակության, ազգի և պետության գործունեությունը կազմակերպող և համակարգող տեղեկատվական տեխնոլոգիական համակարգերի դեմ։

Ինֆոգեն սպառնալիքների աղբյուրները կարող են լինել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին։

Արտաքին ինֆոգեն սպառնալիքների աղբյուր Հայկական հանրության պարագայում կարող են հանդիսանալ.

- Մրցակից կամ հակառակորդ երկրներն ու կազմակերպությունները;
- Իրենց շահերը հետապնդող, սակայն Հայկական հանրության շահերն անտեսող երկրները և կազմակերպությունները, որոնց թվում կարող են լինել նաև քաղաքական և տնտեսական գործընկերները;
- Գլոբալ տեղեկատվական դաշտում շրջանառվող, բայց ոչ հատուկ Հայկական հանրության դեմ ուղղված քաոտիկ տեղեկատվական հոսքերը, որոնք բացասական ներգործություն են ունենում հանրային և անհատական գիտակցության վրա։

Ինֆոգեն ներքին սպառնալիքների աղբյուր կարող են հանդիսանալ.

- Հայաստանում տեղակայված, սակայն օտարերկրյա աղբյուրներից սնվող քաղաքական, հասարակական, տնտեսական կազմակերպությունները և ԶԼՄ-ն, որոնց գործունեությունը չի համապատասխանում Հայկական հանրության շահերին;
- Ներքին մասնավոր և պետական ռեսուրսների վրա հիմնված քաղաքական, հասարակական, տնտեսական կազմակերպությունները,

ընկերությունները, պետական մարմինները և ԶԼՄ-ն, որոնց պատկերացումները Հայկական հանրության ազգային շահերի վերաբերյալ հստակեցված չեն: Որպես հետևանք՝ նման կառույցները կարող են ակամա կամ քաղաքական-գաղափարախոսական սխալ կողմնորոշումների հետևանքով ինֆոգեն վտանգի աղբյուր հանդիսանալ Հայկական հանրության համար: Նման գործողությունների որոշ արտահայտումները երբեմն որակվում են որպես «տեղեկատվական պատերազմ սեփական ժողովրդի դեմ»:

Ինչպես տեսնում ենք, ինֆոգեն սպառնալիքների բացահայտումը և դասակարգումը զգալի չափով պայմանավորված են ազգային շահի *(ԱՇ)* վերաբերյալ բովանդակային պատկերացումներով: *ԱՇ-ի* վերաբերյալ չհստակեցված պատկերացումների պարագայում ինֆոգեն սպառնալիքների բացահայտումը, հետևաբար՝ նաև տեղեկատվական անվտանգության ապահովումը, վերածվում են բավական վիճահարույց խնդրի:

Իրենց հերթին, ինֆոգեն մարտահրավերների բացահայտումը, համապատասխան համակարգումը և վերլուծությունը թույլ են տալիս հասկանալ պայմանական հակառակորդի կամ մրցակցի ռազմավարությունը և դրա իրագործման մեթոդաբանությունը: Ի լրումն, ինֆոգեն սպառնալիքները համապատասխան մեկնություններով և «տեղեկատվական ուղեկցությամբ» հանրությանը ներկայացնելը մոբիլիզացնում է հասարակությունն ու պետությունը, ինչը նպաստում է, որպեսզի նետված մարտահրավերներին տրվի ադեկվատ պատասխան:

Գրականություն

1. *Тойнби А.Дж.,* Цивилизация перед судом истории, Сборник, М., Айрис Пресс, 2003, 592с.
2. *«Տեղեկատվական անվտանգություն», Երևան, 2017 (տպագրվում է):*
3. *Иванов В.*, США должны готовиться к войне пятого поколения, Независимое военное обозрение, #31(962), 25-31, 08.2017.
4. *Плэтт В.,* Стратегическая разведка. Основные принципы. Учебное пособие, М., ФОРУМ, 1997, 376 с.
5. *Крауч К.,* Постдемократия, М., Изд. дом Гос. ун-та - Высшей школы экономики, 2010, 192 с.

ՖԻՔՍՎԱԾ ԼԱՅՆԱՇԵՐՏ ԿԱՊԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ. ՓԱՍՏԵՐ

Արա Մարջանյան*

Ինֆորմացիայի և կապի տեխնոլոգիաների (*ԻԿՏ*, *ICT*) ոլորտը ներկայիս ամենաբուռն զարգացող ոլորտներից է աշխարհում: Այն մեծապես պայմանավորում է հասարակության «ինֆորմացիոն (տեղեկատվական) հասունությունը», նպաստում երկրի տեխնոլոգիական ընկալունակության աճին, փոխում թե՛ տնեսական ու տեխնոլոգիական վիճակը (*технологический уклад*), թե՛ հասարակության կառուցվածքն ու զարգացման դինամիկան: Հաշվի առնելով Հայաստանում *ԻԿՏ* ոլորտի նկատմամբ իշխանությունների և բիզնեսի մեծ հետաքրքրվածությունը, դրա մեծ վարկը հասարակությունում՝ զարմանք է առաջացնում այն հանգամանքը, որ այսօր մեզանում բացակայում են ոլորտի զարգացմանը նվիրված ոչ միայն վերլուծական ուսումնասիրությունները, այլև նույնիսկ առկա վիճակը համարժեք նկարագրող վիճակագրական և փաստագրական բնույթի հրապարակումները[1], ոլորտի հիմնախնդիրներին նվիրված մասնագիտական հայալեզու պարբերականները և այլն: Սույն հոդվածաշարը փորձ է՝ մասնակիորեն լրացնել այս բացը, հիմնականում փաստագրական առումով, և համահունչ է «Հայաստան-Ադրբեջան. կրիտիկական ենթակառուցվածքների ուսումնասիրություն» «Նորավանք» ԳԿՀ թեմայի մոտեցումներին [2-4]:

Շարքի սույն հոդվածում դիտարկվում են *ԻԿՏ* ոլորտի հետևյալ 2 ցուցանիշները. ֆիքսված լայնաշերտ կապի բաժանորդների[2] (ՖԼԿԲ, *fixed*

---

* «Նորավանք» ԳԿՀ առաջատար վերլուծաբան, տ.գ.թ., ա.գ.ա., ՄԱԿ ԶԾ ազգային փորձագետ (էներգետիկա, տրանսպորտ):

[1] Եթե չհաշվենք ԱՄՆ-ում տպագրվող *«Մասիս»* շաբաթաթերթում 2016թ. մարտին հրապարակված հակիրճ ակնարկը [1]:

[2] Ֆիզիկական և իրավաբանական:

broadband subscriptions) թիվը և դրա հարաբերությունը երկրի բնակչության 100 հոգուն (*fixed broadband subscriptions per 100 inhabitants*): Հնարավորության դեպքում ներկայացվում են դրանց հավաստի ժամանակային շարքերը: Համեմատական վերլուծությունն իրականացվում է հիմնականում տեսակարար ցուցանիշներով տարածաշրջանի 6 երկրների համար՝ Հայաստան (ՀՀ), Ադրբեջան (ԱՀ), Վրաստան (ՎՀ), Իրան, Թուրքիա, Ռուսաստան (ՌԴ): Անհրաժեշտության դեպքում դիտարկվում են նաև այլ երկրներ: 2017թ. օգոստոսի դրությամբ հասանելի տվյալները վերցված են ՀՀ և ԱՀ բաց պաշտոնական աղբյուրներից և Հեռահաղորդակցության միջազգային միության (ՀՄՄ, *ITU*), ՄԱԿ ԶԾ և Համաշխարհային բանկի (*WB*) պաշտոնական հրապարակումներից, ինչպես նաև այս կառույցների տվյալների համացանցային գրադարաններից (բոլոր հարցումները՝ 2017թ. օգոստոս):

* * *

Տվյալ երկրում *ԻԿՏ* զարգացածության աստիճանը բնութագրող կարևորագույն բաղադրիչ է լայնաշերտ կապը (ԼԿ)՝ ընդհանրապես, և ֆիքսված լայնաշերտ կապը (ՖԼԿ)՝ մասնավորապես: Արձագանքելով ՄԱԿ գլխավոր քարտուղարի «Հազարամյակի զարգացման մարտահրավերներ» (*Millennium Development Goals*) ծրագրի շրջանակներում հնչեցված հորդորին՝ 2010թ. մայիսին հիմնվեց ՀՄՄ և *UNESCO* հովհանու ներքո գործող ՄԱԿ Թվային զարգացման ԼԿ հանձնաժողովը (*The Broadband Commission for Digital Development*)[3], որն էլ ձեռնամուխ եղավ ԼԿ ոլորտում 4 հիմնական գլոբալ թիրախների ձևակերպմանը և դրանց հասնելու ծրագրերի ու ռազմավարությունների խթանմանը[4]:

Այս առումով կարևորագույն ցուցանիշներն են տվյալ երկրում ՖԼԿԲ թիվը և այդ թվի հարաբերությունը բնակչության 100 հոգու հաշվով: Տեսակարար այս ցուցանիշը հնարավորություն է ընձեռում ոչ միայն գնահատել տվյալ երկրի հասարակական և տնտեսական կյանքում *ԻԿՏ* ոլորտի իրական ներթափանցման աստիճանը, այլև կատարել համար-

[3] www.broadbandcommission.org

[4] Հոդվածի հաջորդ բաժիններում կանդրադառնանք դրանցից երկուսին՝ ՖԼԿ մատչելիությանը և ինտերնետի օգտատերերի տեսակարար թվին:

ժեք համեմատական վերլուծություն՝ վերանալով երկրների մասշտաբային (երկրի բնակչություն, մակերես և այլն) տարբերություններից: Զուր չէ, որ երկրների ինֆորմացիոն հասունությունը, *ԻԿՏ* ոլորտի զարգացածությունը, տեխնոլոգիական ընկալունակությունը գնահատող գլոբալ տեղեկատուներում [5-6] և բազմաթիվ մասնագիտական ուսումնասիրություններում ՖԼԿԲ/100 հոգի ցուցանիշը զբաղեցնում է կենտրոնական դիրք:

Աղյուսակ 1

Հայաստանում պաշտոնական աղբյուրների ՖԼԿԲ ցուցանիշները (հասանելի 2017թ. օգոստոսի դրությամբ)

Ցուցանիշներ	2013	2014	2015	2016
Ֆիզիկական անձանց ՖԼԿԲ թիվն ըստ ՏԿՏՏՆ-ի [7]	**243 058**	**272 885**	**286 319**	
Կազմակերպությունների ՖԼԿԲ թիվն ըստ ՏԿՏՏՆ-ի [7]	**13 096**	**10 975**	**10 844**	
Ընդամենը ՖԼԿԲ թիվն ըստ ՏԿՏՏՆ-ի [7]	**256 154**	**283 860**	**297 163**	
Լայնաշերտ ինտերնետ հասանելիությամբ բաժանորդների թիվն ըստ ՀԾԿՀ-ի [9]	**1 166 342**	**1 293 467**	**1 520 756**	**1 911 089**

Աղյուսակ 1-ում ամբողջացնում ենք այս երկու ցուցանիշով վերջին 4 տարիների համար հայկական պաշտոնական աղբյուրներում հասանելի *բոլոր* տվյալները: Ցուցանիշների վերտառությունը բերում ենք ըստ համապատասխան աղբյուրների: Սկսենք պաշտոնական աղբյուրներից. դրանք հիմնականում հանդիսանում են տվյալ երկրի կապի և հեռահաղորդակցության նախարարությունները, ազգային վիճակագրական ծառայությունները և այլ լիազորված կազմակերպություններ: Հայաստանում այդպիսին է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը (ՏԿՏՏՆ)[5]: Նման վերտառությամբ այն վերափոխվել էր 2016թ. սեպտեմբերին (2000-ից՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն): Ադրբեջանում կապի նախարարությունը վերափոխվել էր կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարության հանրապետության նախագահի 2004թ. փետրվարի 24-ի հրամանով: Իսկ 2017թ.

[5] http://mtcit.am/main.php?lang=1&page_id=643#

փետրվարի 13-ին, միանալով տրանսպորտի նախարարության հետ, այն վերափոխվել է Ադրբեջանի տրանսպորտի, կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարության[6]:

Այժմ անդրադառնանք Աղյուսակ 1-ում բերվող ցուցանիշներին: Ինչպես տեսնում ենք, դրանք կարող են տարակուսանք առաջացնել և կարոտ են բացատրության: Նախ՝ դրանք դժվարհասանելի են, քանի որ չեն բերվում անմիջականորեն, այլ ընկղմված են ՏԿՏՏՆ 2013-15թթ. հաշվետվության հավելվածների մեջ: Ընդ որում՝ ՀՀ ՏԿՏՏՆ վերջին հաշվետվությունում (հասանելի 2017թ. օգոստոսին) 2016թ. ցուցանիշները բացակայում են: Ընդհանրապես, ՀՀ ՏԿՏՏՆ պաշտոնական կայքը *ԻԿՏ* մասով տակավին աղքատիկ է ու չի պարունակում որևէ վիճակագրական, առավել ևս՝ վերլուծական բնույթի նյութ: Մասնավորապես, կայքում բացակայում է հայաստանյան կազմակերպությունների շրջանակում ՖԼԿԲ թվի նվազումը վերլուծող որևէ նյութ: Ինչպես տեսնում ենք աղյուսակից, 2013-ին այն կազմում էր ավելի քան 13 հազ., մինչդեռ 2015-ին նվազում է մինչև 10.8 հազ: 2015-ին Հայաստանում ՖԼԿԲ գումարային թիվը կազմել էր մոտ 297.2 հազ., որից 286.32 հազ.՝ ֆիզիկական անձանց համար [7, տող 13-14, ՀՄՄ կոդ՝ 4213tfbb և 4213tfbo]: Իսկ 2013-ին՝ 256.2 և 243 հազ. համապատասխանաբար (տե՛ս Աղյուսակ 1): Համաձայն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2016թ. օգոստոսի 30-ի թիվ 667-Ն հրամանի, Հայաստանում *ԻԿՏ* ոլորտի վիճակագրության ներկայացումը վերապահված է ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին (ՀԾԿՀ) [8, տող 24-28, ԿՏՀ կոդ 2.17-2.21]:

Սակայն,ՀԾԿՀ պաշտոնական հաշվետվություններում ՖԼԿԲ ցուցանիշն ընդհանրապես չի դիտարկվում: Փոխարենը բերվում է «Լայնաշերտ ինտերնետ հասանելիությամբ բաժանորդների թիվ» վերտառությամբ մի ցուցանիշ, որի արժեքը 2016-ին կազմել է 1.911 մլն [9]: Հաշվետվությունը չի հիմնավորում ոչ 2016թ. այս արժեքը, ոչ դրա էական աճը 2015թ. ցուցանիշի (1.52 մլն) համեմատ և ոչ էլ այն փաստը, որ 2015թ. այս 1.52 մլն ցուցանիշը 5 անգամ ավելին է, քան ՏԿՏՏՆ 2015թ. ՖԼԿԲ թիվը՝

[6] Նախարար է նշանակվել Կապի և բարձր տեխնոլոգիաների նախկին նախարարը (Ռամին Գուլուզադե), www.mincom.gov.az:

մոտ 297.2 հազ. (այս տարբերության մասին ավելի հանգամանալի տե՛ս ստորև): Բացի այդ, ոչ մի պաշտոնական աղբյուր չի բերում ՖԼԿԲ տեսակարար ցուցանիշները, որոնք պիտանի լինեին համեմատական վերլուծության համար:

Ուստի, հիմնվելով ՀՄՄ համացանցային գրադարանի տվյալների վրա՝ Գծապատկեր 1-ում կառուցում ենք մեր տարածաշրջանի 6 երկրների ՖԼԿԲ/100 հոգի կորերը 2008-16թթ. ժամանակահատվածի համար: Հայաստանի համար այս ցուցանիշը 2016թ. կազմել է 10.13 ՖԼԿԲ/100 հոգի (303 հազ. ՖԼԿԲ): Սա ՀՄՄ գնահատականն է (ինչպես տեսանք վերը, 2016թ. ՖԼԿԲ հուսալի գնահատականը Հայաստանում բացակայում էր), և այն նվազագույնն է մեր տարածաշրջանում: Իրոք, 2016-ին, Վրաստանին (15.81/100 հոգի, 677.6 հազ. ՖԼԿԲ) Հայաստանը զիջում էր ՖԼԿԲ տեսակարար ցուցանիշով մոտ 36%-ով, իսկ բացարձակ թվով՝ ավելի քան 2 անգամ: Ադրբեջանին (18.58/100 հոգի, 1.804 մլն ՖԼԿԲ) Հայաստանը զիջում էր մոտ 47% տեսակարար, և ավելի քան 6 անգամ՝ բացարձակ թվով:

Գծապատկեր 1

Տարածաշրջանի 6 երկրներում ՖԼԿԲ թվաքանակը 100 հոգի բնակչության հաշվով (աղբյուրը՝ ITU Data Base)



Իրադրությունը նույնն էր նաև անցած 3 տարիներին: 2013-ից առաջ Հայաստանը տարածաշրջանում գերազանցում էր միայն Իրանին (տե՛ս Գծապատկեր 1): Եթե 2009-ին Ադրբեջանի համեմատ Հայաստանի ՖԼԿԲ ցուցանիշն ավելի մեծ էր, ապա հաջորդ տարի Ադրբեջանի ցուցանիշը սրընթաց աճում է՝ հասնելով 5.23 ՖԼԿԲ/100 հոգի, Հայաստանինը՝ 3.16: Հետագա տարիներին այս գերազանցումը միայն աճում է. 2012-ին Ադրբեջան՝ 14.7, Հայաստան՝ 7.1: 2014-ին Ադրբեջան՝ 19.9, Հայաստան՝ 9.1: Այն աննշան նվազում է միայն 2016-ին՝ պայմանավորված առավելապես Ադրբեջանում այդ տարի ՖԼԿԲ թվի նվազումով (տե՛ս Գծապատկեր 1):

Գծապատկեր 2-ում ներկայացնում ենք 2016թ. դրությունն ավելի լայն համատեքստում՝ բերելով ՖԼԿԲ/100 հոգի ցուցանիշի արժեքները ԽՍՀՄ նախկին բոլոր հանրապետությունների և մի շարք այլ երկրների (ԱՄՆ, Իսրայել, Թուրքիա, Իրան) համար: Ներկայացնում ենք նաև աշխարհի 197 երկրների համար հաշվարկված 2016թ. միջին ցուցանիշը (14.02 ՖԼԿԲ/100 հոգի): Ընդ որում՝ 2016-ին 78 երկիր գերազանցում էր այս միջին ցուցանիշը, իսկ 119 երկրի համար գրանցված է միջին ցուցանիշից ավելի փոքր արդյունք:

Գծապատկեր 2

Որոշ երկրների ՖԼԿԲ /100 հոգի բնակչության 2016թ. ցուցանիշը (աղբյուրը՝ ITU Data Base, սեփական հաշվարկներ)



Ինչպես տեսնում ենք, դիտարկվող երկրների մեջ առաջատարը Բելառուսն է, որը 2016թ. իր ցուցանիշով (33.3 ՖԼԿԲ/100 հոգի) աշխարհի 197 երկրների շարքում զբաղեցնում էր 24-րդ տեղը՝ գերազանցելով միջին համաշխարհային ցուցանիշն ավելի քան երկու անգամ: ԱՄՆ-ը՝ իր 32.37 ՖԼԿԲ/100 հոգի ցուցանիշով, զբաղեցնում էր 29-րդ տեղը, Իսրայելը՝ 44-րդ, Ադրբեջանը՝ 67-րդ, Մոլդովան՝ 74-րդ տեղը: Մինչդեռ Հայաստանը 2016թ. իր ցուցանիշով զբաղեցնում էր 92-րդ տեղը՝ զիջելով միջին համաշխարհային ցուցանիշին մոտ 30%-ով ու ԽՍՀՄ նախկին հանրապետություններից գերազանցելով միայն Ուզբեկստանին (աննշան), Ղրղզստանին, Թուրքմենստանին և Տաջիկստանին:

ԻԿՏ ոլորտում նոր տեխնոլոգիաների ներթափանցման, դրանց զարգացման դինամիկայի և օրինաչափությունների նկարագրման տեսանկյունից օգտակար է համեմատել ՖԼԿԲ տեսակարար ցուցանիշների կորերն այն երկրների համար, որոնք որդեգրել են տեխնոլոգիական զարգացման տարբեր մոդելներ: Այդ նպատակով Գծապատկեր 3-ում բերում ենք ԱՄՆ, Իսրայելի, Էստոնիայի Բելառուսի, ՌԴ-ի, Հայաստանի, Ադրբեջանի և Ուզբեկստանի կորերը 2000-16թթ. ժամանակահատվածի համար: Ինչպես տեսնում ենք, բոլոր այս կորերին բնորոշ է շրջված S-ձև տեսքը, շրջման մեկ կետով (*inflection point*): Այդ կետը նախանշում է բուռն զարգացման փուլի շրջումը զարգացման ավելի դանդաղ տեմպով փուլի: Ինչը շուկայի հագեցման, ֆիքսված լայնաշերտ կապի (ՖԼԿ) տեխնոլոգիաների տվյալ սերնդի սահմանային ցուցանիշներին հասնելու և այլ, այդ թվում՝ տնտեսական ու քաղաքական, գործոնների հետևանք է: Ընդ որում՝ որոշ երկրների համար շրջման կետից հետո ՖԼԿԲ կորը ոչ թե հասնում է «պլատո»-ի ռեժիմ՝ դառնալով հաստատուն, այլ շարունակում է դանդաղ գծային աճը (տե՛ս ԱՄՆ, Էստոնիայի և Իսրայելի ՖԼԿԲ կորերը Գծապատկեր 3-ում):

Գծապատկեր 3

ՖԼԿԲ/100 հոգի բնակչության հաշվով ցուցանիշի ժամանակային շարքերը որոշ երկրների համար (աղբյուրը՝ ITU Data Base)



Այստեղ, սակայն, կցանկանայինք ընդգծել գծապատկերում բերվող կորերին բնորոշ երկու այլ կարևոր դինամիկ օրինաչափություն: Առաջինը տարբեր երկրների ՖԼԿԲ կորերի՝ միմյանց նկատմամբ ժամանակային շեղումն է՝ արտահայտված դրանց «ուշացումով» (ժամանակային *լագով*), ինչն արտացոլում է «թվային խզման» (*digital divide*) երևույթը[7]: Երկրորդը ՖԼԿԲ/100 հոգի կորերի սկզբնական աճի փուլի կտրուկության աստիճանն է (*крутизна, slope*), և բուռն աճի այդ փուլի տևողությունը:

Իրոք, ՖԼԿ տեխնոլոգիաների ներթափանցումը Էստոնիայում կամ Իսրայելում սկսվել էր 2000-01թթ., իսկ ԱՄՆ-ում՝ դեռ 1998-ին: Շրջման կետին այս երկրների կորերը հասնում են 2004-05թթ., իսկ ավելի քան 60% միջին տարեկան աճի տեմպով զարգացման փուլի տևողությունն այդ երկրներում կազմում էր մոտ 5 տարի: ՌԴ-ի և Բելառուսի համար ՖԼԿ տեխնոլոգիաների ներթափանցումը սկսվում է Էստոնիայից և Իսրայելից մոտ 6-7 տարի ուշացումով: Եվ եթե ՌԴ պարագայում կորը հաս-

[7] Դրան կանդրադառնանք շարքի հաջորդ հոդվածներում:

նում է շրջման կետին ընդամենը 2 տարում, աճի համեմատաբար մեղմ տեմպի պարագայում, ապա Բելառուսի դեպքում աճի փուլը տևում է 7 տարի՝ շրջման կետին հասնելով դրա 4-րդ տարում՝ 2010-ին: Արդյունքում՝ Բելառուսը դրսևորում է ՖԼԿ տեխնոլոգիաների ներթափանցման տպավորիչ արդյունք, բացառիկ ողջ աշխարհի համար: 2016-ին ՖԼԿԲ/100 հոգի ցուցանիշով այն գերազանցում է նույնիսկ ԱՄՆ-ին և Էստոնիային: Հայաստանում և Ադրբեջանում զարգացումը սկսվում է ՌԴ և Բելառուսից 3-4 տարի ուշացումով՝ 2008-ին: Եվ եթե Ադրբեջանի պարագայում բուռն զարգացման փուլը տևում է 5 տարի՝ շրջման կետին հասնելով 4-րդ տարում, ապա Հայաստանի պարագայում այն ավելի կարճ էր, աճի ավելի ցածր տեմպով: Ուզբեկստանում զարգացումը սկսվում է էլ ավելի ուշ՝ 2013-ին, Հայաստանից և Ադրբեջանից 4 տարի ուշացումով: Սակայն աճի տեմպն Ուզբեկստանում այնպիսին էր, որ 2016թ. ՖԼԿԲ/100 հոգի ցուցանիշով գրեթե հավասարվում է Հայաստանին: Ներկայացված վիճակն ինքնին մտահոգիչ է և ավելի մտահոգիչ է դառնում, քանի որ այն գրեթե անհնարին է տեսնել մեր վիճակագրությունից կամ նշմարել պաշտոնական հրապարակումներում:

Ինչպես վերը նշեցինք, ՖԼԿԲ բացարձակ թվերը և ՖԼԿԲ/100 հոգի տեսակարար ցուցանիշները ՀՀ ՏԿՏՏ հրապարակումներում և կայքում դժվարհասանելի են, իսկ ՀԾԿՀ պաշտոնական հրապարակումներում պարզապես բացակայում են: Այս ցուցանիշների մասին ոչ մի տեղեկատվություն չկա նաև ՀԾԿՀ *ԻԿՏ* ոլորտին նվիրված կայքում՝ աղքատիկ և ոչ ինֆորմատիվ[8]: Փոխարենը, ՀԾԿՀ 2016թ. գործունեության մասին տարեկան հաշվետվությունում այս առնչությամբ հանդիպում ենք միայն հետևյալ խորհրդավոր պնդմանը. «Ավելացել են լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ծավալները, որոնց բաժանորդների քանակը (ներառյալ շարժական 3G) 2016թ. կազմել է 1 911 089, ինչը նշանակում է, որ նախորդ տարվա համեմատ գրանցվել է բաժանորդների քանակի աճ 26%-ով» [9, էջ 31]: Սակայն այս պնդումն ապակողմնորոշող է, ոչ համարժեք և կարող է բերել և բերում է (տե՛ս [1, 10, 11]) թյուրիմացությունների:

[8] http://psrc.am./sectors/electronic-communications

Բանն այն է, որ ոչ ՀՄՄ-ն, ոչ էլ մասնագիտական որևէ կառույց չի ճանաչում այնպիսի ցուցանիշ, ինչպիսին է «լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ծավալը, որոնց բաժանորդների քանակը ներառի շարժական 3G կապը»: Հակառակը, դրանք ճանաչում են մոբիլ կապին առնչվող տարատեսակ ցուցանիշներ (դրանց մասին՝ հաջորդ բաժիններում), ինչպես նաև դրանցից միանգամայն զատ, հստակ սահմանված ու մեծապես կարևորվող ֆիքսված լայնաշերտ *կապի* բաժանորդների թիվը՝ ՖԼԿԲ: Ըստ միջազգայնորեն ընդունված մեթոդաբանության [12, 13][9], այն *պետք է* ներառի համացանցին *TCP/IP* արագագործ պրոտոկոլներով ֆիքսված բաժանորդային միացումները *միայն* 256 կԲիտ/վ ու ավելի արագությամբ (*downstream speed*), ներառյալ *WiMAX* ոչմալուխային տեխնոլոգիայով միացումները: Եվ այն *չպետք է* ներառի մոբիլ բջջային սարքավորումներից համացանցին միացումների թիվը:

Գծապատկեր 4

Ադրբեջանի և Հայաստանի ՖԼԿԲ ցուցանիշները (մլն) ըստ ITU տվյալների բազայի: Հայաստանի ԼԻԲ ցուցանիշն (մլն) ըստ ՀԾԿՀ-ի [9], 2008-16թթ.



[9] Ընդունված ու հաստատված նաև Հայաստանում [7, տող 13-14, Սահմանումներ]:

Ներմուծելով «լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդ» (ԼԻԲ) արհեստածին ցուցանիշը, ներառելով դրանում նաև 3G մոբիլ կապով ինտերնետ հասանելիությամբ բաժանորդների թիվը՝ գործառության մեջ է դրվում ոչ միայն տեխնիկա-տեխնոլոգիական իմաստից զուրկ մի ցուցանիշ, այլև խախտվում է ընդունված մեթոդաբանությունը, խեղաթյուրվում Հայաստանում *ԻԿՏ* ներթափանցման իրական պատկերը: ՀԾԿՀ [9] հաշվետվության վերոնշյալ պնդումն իրականում պետք է ունենար հետևյալ տեսքը. «2016-ին ՖԼԿԲ թիվը Հայաստանում կազմել է մոտ 303 հազ.[10] բաժանորդ, ինչը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ (286.32 հազ.) աճել է 5.5%-ով՝ 2-րդ նվազագույն աճը անցած 6 տարիների ընթացքում»: Իսկապես, 2015-ին աճը նախորդ տարվա համեմատ կազմել էր 4.7%: Մինչդեռ, 2014-ին այն 2013թ. համեմատ կազմել էր 10.9%, 2013-ին՝ 12.8%, 2012-ին՝ 24.3%, իսկ 2011-ին՝ 41.7%.

Գծապատկեր 4-ում բերում ենք Հայաստանում ՖԼԿԲ թվի իրական կորը 2008-16թթ. համար՝ կառուցված ըստ ՀՄՄ առցանց գրադարանի տվյալների: Որպես դրանց աղբյուր ՀՄՄ-ն նշում է ՀՀ ՏԿՏՏ նախարարությունը, բացառությամբ 2011 և 2016թթ., որոնց համար բերվում են ՀՄՄ սեփական գնահատականները: Գծապատկերում բերում ենք նաև ՀԾԿՀ-ի կողմից ներմուծված ԼԻԲ ցուցանիշի կորը [9, 10]: Համեմատության համար նույն գրաֆիկում բերում ենք Ադրբեջանի ՖԼԿԲ կորը՝ համաձայն ՀՄՄ բազայի տվյալների: Որպես դրանց աղբյուր ՀՄՄ-ն նշում է ԱՀ տրանսպորտի, կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարությունը (MTC&HT)[11]:

Այսպիսով.

- Հայաստանում ՖԼԿ տեխնոլոգիաների ներթափանցման ուշացումն առաջատար երկրներից կազմել է 10-12 տարի: Այս ժամանակահատվածն ավելին է, քան ՖԼԿ տեխնոլոգիական մեկ սերնդափոխության տևողությունը:

[10] ՀՄՄ գնահատական:

[11] Բացառված չէ, որ MTC&HT-ի կողմից ՀՄՄ զեկուցված տվյալներն ուռճացված են: Ադրբեջանից ստացված *ԻԿՏ* ոլորտի վիճակագրական տվյալների արժանահավատության ցածր գնահատականների մասին տե՛ս [14]:

- Կառուցվածքային առումով ինֆորմացիոն տեխնոլոգիաների (բարձր տեխնոլոգիաների) սեգմենտը նախարարական մակարդակով Հայաստանում հիմնվել է 2016-ին՝ Ադրբեջանից 12 տարի ուշացումով:
- Հայաստանում ՖԼԿԲ/100 հոգի տեսակարար ցուցանիշի սկզբնական աճի փուլին բնորոշ էին ընդհանուր ընկճվածությունը, դրա կտրուկության պակասը և շրջման փուլի վաղ հասունացումը: Արդյունքում՝ նշված ցուցանիշներով Հայաստանը տարածաշրջանում զբաղեցնում է վերջին տեղը:
- Անցած 7 տարիների ընթացքում ՖԼԿԲ տեսակարար ցուցանիշով Հայաստանը զիջում էր Ադրբեջանին միջինը տարեկան 50%-ով, իսկ բացարձակ թվերով՝ միջինը տարեկան 6.3 անգամ:

Շարունակելի

Աղբյուրներ և գրականություն

1. *Gharabegian Areg,* Internet in Armenia and Neighboring Countries. *Masis*, March 31, 2016, https://massispost.com/2016/03/internet-in-armenia-and-neighboring-countries/
2. *Մարջանյան Ա.Հ.,* Նյութական և ոչ նյութական կրիտիկական ենթակառուցվածքներ. Ադրբեջանի կրիտիկական ենթակառուցվածքները, «Նորավանք» ԳԿՀ սեմինար, 23.12.2016, http://www.noravank.am/arm/seminar/detail.php?ELEMENT_ID=15305
3. *Մարտիրոսյան Ս.,* Հայաստանի տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրներ. խոցելի ենթակառուցվածքներ, «Նորավանք» ԳԿՀ սեմինար, 10.03.2017, http://www.noravank.am/arm/seminar/detail.php?ELEMENT_ID=15551
4. *Գրինյան Ս.,* Կրիտիկական ենթակառուցվածքներ. տեսություն և արդիականություն, «Նորավանք» ԳԿՀ սեմինար, 26.06.2017, http://www.noravank.am/arm/seminar/detail.php?ELEMENT_ID=15847
5. UN International Telecommunication Union. *Measuring the Information Society,* http://www.itu.int. Broadband Commission for Sustainable Development. *State of Broadband reports,* http://www.broadbandcommission.org/resources/Pages/default.aspx
6. The World Bank Group. World Development Indicators. 5.12 The information society, http://wdi.worldbank.org/table
7. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի օգոստոսի 30-ի թիվ 667-Ն հրաման, «Հավելված N 1», http://mtcit.am/edfiles/files/THT/3008201615.2.pdf
8. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2016թ. օգոստոսի 30-ի թիվ 667-Ն հրաման, http://mtcit.am/edfiles/files/THT/667N.compressed.pdf
9. ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016թ. գործունեության հաշվետվություն: Հաստատված է 2017թ. ապրիլի 19-ի No 138L որոշմամբ, http://psrc.am/images/docs/reports/Report_2016.pdf
10. *Մարտիրոսյան Ս.,* Համացանցի և բջջային կապի ներթափանցումը Հայաստանում 2016թ., «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 6 (85), 2017, http://www.noravank.am/upload/pdf/Globus_6_2017.pdf
11. *Թունյան Բ.,* Ինչ է կատարվում Հայաստանի SS ոլորտում, *168 ժամ*, մայիս 28, 2017, https://168.am/2017/05/28/800211.html
12. ITU. Measuring the Information Society Reports.
13. The World Bank Group. World Development Indicators.
14. The World Bank Group. World Development Indicators. 5. States and Markets, Table 5.14. Statistical capacity, http://wdi.worldbank.org/table/5.14

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Սամվել Մարտիրոսյան[*]

Կիբեռանվտանգության հետ կապված խնդիրները դառնում են առաջնային միջազգային մակարդակով: Արդեն հասկանալի է, որ կիբեռհարձակումները ոչ միայն հասցնում են ահռելի վնասներ համաշխարհային տնտեսությանը (ըստ որոշ հաշվարկների՝ ընդհանուր վնասը 2016թ. կազմել է $450 մլրդ[1]), դրանք նաև ազգային մակարդակի լուրջ վտանգներ են կրիտիկական ենթակառուցվածքների համար[2]:

Հայաստանի Հանրապետությունը, լինելով աշխարհի մի մաս, չի կարող խուսափել հիմնական արդիական վտանգներից: Բացի այդ, քանի որ Հայաստանն ինքնին հանդիսանում է թիրախ ադրբեջանական և թուրքական հաքերային խմբերի համար, ապա այստեղ կան նաև հստակ վտանգներ, որոնք տեսական բնույթ չեն կրում:

Առկա իրավիճակում պետք է ենթադրել, որ Հայաստանում կիբեռանվտանգությանը պետք է հատուկ ուշադրություն դարձվի: Սակայն իրական պատկերը հեռու է իդեալականից: Առավել ևս, որ կիբեռանվտանգությունը ենթադրում է անընդհատ և դինամիկ պաշտպանության զարգացում, քանի որ վտանգները տարեցտարի փոխվում են: Իրականում Հայաստանը պատրաստ չէ արդիական մարտահրավերներին կիբեռտիրույթում: Անպատրաստությունը որոշ ոլորտներում արձանագրեց նաև *International Telecommunication Union (ITU)* ՄԱԿ գործակալության կողմից հրապարակված *Global Cyber Security Index 2017* համաշխարհային կիբեռանվտանգության ուսումնասիրությունը[3]:

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

[1] Cybercrime costs the global economy $450 billion: CEO, https://www.cnbc.com/2017/02/07/cybercrime-costs-the-global-economy-450-billion-ceo.html

[2] Սամվել Մարտիրոսյան. «Կիբեռանվտանգություն և կրիտիկական հանգույցների պաշտպանություն», http://www.noravank.am/arm/video/detail.php?ELEMENT_ID=14795

[3] Global Cyber Security Index 2017 https://www.itu.int/dms_pub/itu-d/opb/str/D-STR-GCI.01-2017-PDF-E.pdf

Այս ուսումնասիրությունը տեղադրում է Հայաստանը 111-րդ դիրքում, այսինքն՝ աշխարհում գրեթե ամենավատ դիրքերում: Մինչդեռ, օրինակ, մեր հարևան Վրաստանն արդեն 8-րդ տեղում է հայտնվել, Ադրբեջանը՝ 48-րդ (տե՛ս *Աղյուսակ 1*).

Աղյուսակ 1

Մի շարք հետխորհրդային երկրների դիրքը
ITU Global Cyber Security Index 2017
կիբեռանվտանգության վարկանիշում

Երկիրը	Դիրքը վարկանիշում
Վրաստան	8
Ռուսաստանի Դաշնություն	10
Բելառուս	39
Ադրբեջան	48
Ուկրաինա	59
Մոլդովա	73
Ղազախստան	83
Տաջիկստան	91
Ուզբեկստան	93
Ղրղզստան	97
Հայաստան	111
Թուրքմենստան	132

Ինչո՞վ է պայմանավորված Հայաստանի նման ցածր դիրքը վարկանիշում: Ուսումնասիրությունը գնահատել է երկրներն ըստ մի քանի հիմնական ոլորտային չափանիշների: Խոսքը հինգ հիմնական խմբերի մասին է. ոլորտային օրենսդրության, տեխնիկական, որը ենթադրում է ազ-

գային մակարդակի կամ ոլորտային կիբեռանվտանգության պատասխանատու մարմինների առկայությունը, կիբեռանվտանգության ռազմավարությունը, ստանդարտների ձևավորումը և կրթական ծրագրերն ու համագործակցությունն ինչպես երկրի սահմաններում, այնպես էլ միջազգային մակարդակով (տե՛ս *Նկար 1*).

Նկար 1

ITU Global Cyber Security Index 2017
հիմնական գնահատման ցուցանիշները



Եթե դիտարկենք նման ցուցանիշները, ապա կտեսնենք, որ Հայաստանում գրեթե ոչ մի կետ ազգային կամ պետական մակարդակով ոչ իրականացված են տվյալ պահին, ոչ էլ իրագործման ճանապարհին են: Օրենսդրությունը հիմնական առումով չի նկարագրում արդիական ՏՏ զարգացումները: Կիբեռանվտանգության հանրային կամ ոլորտային պատասխանատու մարմիններ, որպես այդպիսին, չկան: Գոյություն ունեն մի շարք կառույցներում, օրինակ՝ ԱԱԾ-ում, համապատասխան

բաժիններ, որոնք, սակայն, լուծում են խիստ սահմանափակ տիրույթների պաշտպանության խնդիրը[4]: Հստակ ռազմավարության բացակայությունը տվյալ պահին բերում է նաև ստանդարտների բացակայության: Կրթական համակարգում խնդիրն ընդհանրապես անտեսվում է: Ինչ վերաբերում է համագործակցությանը միջազգային մակարդակով, սա միակ ոլորտն է, ուր Հայաստանը դերակատար է հանդիսանում (տե՛ս *Նկար 2*).

Նկար 2

ITU Global Cyber Security Index 2017
մի շարք հետխորհրդային երկրներն
ըստ հիմնական գնահատման ցուցանիշների

Figure 6.5.2: CIS region scorecard



Իհարկե, ցուցանիշները տագնապալից են: Սակայն դրանք ցուցադրում են Հայաստանի պոտենցիալ խոցելիությունը կիբեռհարձակումների տեսանկյունից: Մյուս կողմից, ինքնակարգավորման, տեղական լուծումների շնորհիվ վտանգները նվազեցվում են: Բացի այդ, առայսօր չկա հստակ հրապարակված վիճակագրություն՝ կապված Հայաստանում կիբեռհանցագործությունների հետ:

[4] Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, 26 դեկտեմբերի 2013 թվականի, N 1521-Ն: http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=88785

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռոման Կարապետյան[*]

Չճանաչված կամ դե-ֆակտո գոյություն ունեցող պետությունների՝ միջազգային հարաբերություններին և համաշխարհային քաղաքական գործընթացներին ընդգրկվելու խնդիրը ժամանակակից քաղաքագիտական հանրույթի քննարկման կարևոր հարցերից է: Ներկայում աշխարհում կան բազմաթիվ այդպիսի պետություններ, որոնք փորձում են գտնել իրենց տեղը պետությունների ընտանիքում:

Գաղտնիք չէ, որ քիչ են օրինակները, երբ տարածքային հակամարտությունները գտնում են կարգավորման խաղաղ կամ արդարացի լուծում: Մի կողմ դնելով բանակցող կողմերի դիրքորոշումների միջև առկա ակնհայտ տարբերակվող մոտեցումները՝ փաստենք, որ Արցախյան հիմնախնդիրը դասվում է ամենաբարդերի շարքին. խնդրի բարդությունը կրկնապատկվում է նրանով, որ այստեղ, բացի անմիջական մասնակից կամ բանակցող կողմերից, կան բազմաթիվ արտաքին ակտորներ կամ «շահառուներ»: Մյուս կողմից էլ՝ նշենք, որ Արցախյան հակամարտությունը տարբերվում է մյուս հիմնախնդիրներից իր էությամբ. ըստ մեր դիտարկման, այն դուրս է տիպիկ տարածքային հակամարտությունների շարքին դասվելուց: Խոսքն այն մասին է, որ Արցախյան հիմնախնդիրն առաջին հերթին ոչ թե տարածքային հակամարտություն է, այլ ճանաչման հարց: Ավելին, խոսքը կայացած պետության ճանաչման մասին է, որն արդեն տասնամյակներ ապացուցում է միջազգային հանրությանն իր ինքնուրույն գոյապահպանման ունակությունը: Պետությունների ճանաչման հարցը ժամանակակից քաղաքագիտական մտքում ամենաշատ քննարկվող հարցե-

[*] ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս:

րից է: Մինչև այժմ չկա հստակ պատասխան այն հարցին, թե ինչ է նշանակում ճանաչված պետություն: Ուստի, «ճանաչում» տերմինն ավելի շատ քաղաքական եզրույթ է, քան քաղաքագիտական հարց: Այսպես է կարծում քաղաքագետների մի մասը: Ըստ այդմ՝ ճանաչման գործընթացը պետության գոյության և զարգացման հերթական փուլն է միայն, ուստի՝ այն չի կարող հարցականի տակ դնել պետության գոյությունը: Լիովին համաձայնելով այս դիտարկման հետ՝ ավելացնենք, որ այս պնդման արդարացիությունն ապացուցվել է ինչպես Արցախի, այնպես էլ չճանաչված այլ պետությունների օրինակներով:

Խոսելով Արցախի Հանրապետության (այսուհետ՝ Արցախ) միջազգային ճանաչման մասին՝ չենք կարող չանդրադառնալ Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ Հայաստան) դիրքորոշմանը: Արդյո՞ք Հայաստանը պետք է առաջին քայլը կատարի՝ ճանաչելով Արցախի անկախությունը, կամ՝ ինչո՞ւ Հայաստանը չի անում դա: Փորձենք հարցին առավել խորքային պատասխան տալ՝ անդրադառնալով հարցի վերաբերյալ հայ քաղաքագիտական հանրույթում առկա տեսակետներին: Նրանց մի մասի կարծիքով՝ Հայաստանի կողմից Արցախի ճանաչումն անհետաձգելի քայլ պետք է լինի: Այս տեսակետի գլխավոր հիմնավորումն այն է, որ Արցախը կայացած պետություն է, մեզ համար չկա հիմնախնդրի լուծման այլ տարբերակ, քան Արցախի անկախ գոյությունն է, ուստի կարգավիճակի շուրջ բանակցելով՝ մենք հարցականի տակ ենք դնում նրա անկախությունը: Մյուս կողմից էլ, որպես հիմնավորում բերվում են Կոսովոյի, Աբխազիայի, Հարավային Օսիայի օրինակները, որոնք միջազգային ճանաչման ուղին բռնել են բանակցող կողմերից մեկի ճանաչումից հետո: Իսկ Կոսովոյի դեպքում կա նաև ՄԱԿ միջազգային դատարանի որոշումն այն մասին, որ վերջինիս անկախությունը չի հակասում միջազգային նորմերին[1]: Ավելացնենք, որ այս տեսակետի կողմնակիցները մեծամասնություն չեն կազմում:

Թերևս, առավել տարածված է այն տեսակետը, որ անհրաժեշտ է հետևել Մինսկի խմբի ձևաչափին և հիմնախնդրի կարգավորմանը հաս-

[1] Kosovo's independence is legal, UN court rules, https://www.theguardian.com/world/2010/jul/22/kosovo-independence-un-ruling

նել բանակցային ճանապարհով, քանի որ Արցախի ճանաչումը կարող է անկանխատեսելի հետևանքների բերել, այդ թվում՝ բանակցային գործընթացի լիարժեք ձախողման և լայնամասշտաբ ռազմական գործողությունների վերսկսման: Արդյո՞ք հայկական կողմը պատրաստ է միակողմանի ճանաչման հետևանքով հակառակորդի պատասխանի ցանկացած սցենարի: Կարծում ենք, որ միայն այս հարցի դրական պատասխանը հիմնավորելու դեպքում պետք է հետևել առաջին տեսակետի կողմնակիցներին: Մյուս կողմից՝ չճանաչումը և հակամարտության երկարակեցությունը փոքրացնում են վերջինիս խաղաղ կարգավորման հնարավորությունները: Դրա պատճառներից մեկն այն է, որ ադրբեջանական հանրությունը, տարիների ընթացքում ենթարկվելով Բաքվի քարոզչամեքենայի կեղծ տեղեկատվությանը, ավելի ու ավելի է հեռանում իրականությունից՝ չփորձելով նայել հիմնախնդրի ակունքներին: Այսպիսով, ստեղծվել է մի այնպիսի իրավիճակ, երբ բանակցային գործընթացը չի նպաստում կողմերի դիրքորոշումների մերձեցմանը՝ բերելով ժամանակի ձգձգման և թշնամական մթնոլորտի մեծացման:

Իսկ ինչպիսի՞ն է պաշտոնական Երևանի դիրքորոշումն այս հարցում: Նշենք, որ 2010թ. դեկտեմբերին ՀՀ Ազգայի ժողովում «Ժառանգություն» խմբակցության առաջարկով քննարկման է դրվել Արցախի ճանաչման մասին օրենքի նախագիծը, սակայն մեծամասնություն կազմող կուսակցությունների ներկայացուցիչները չեն մասնակցել քվեարկությանը և օրինագիծը չի ընդունվել: 2016թ. ապրիլին, երբ արցախա-ադրբեջանական շփման գծում Ադրբեջանը լայնամասշտաբ ռազմական գործողություններ սանձազերծեց, ՀՀ նախագահ Ս.Սարգսյանը խոսեց Հայաստանի կողմից Արցախի ճանաչման հնարավորության մասին՝ որպես Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականության միակ այլընտրանք: Սակայն այդ խոսակցությունները շատ արագ էլ մարեցին, քանի որ հայկական կողմը գտնում է, որ բանակցային ներուժը դեռևս ամբողջությամբ սպառված չէ: Նշենք նաև, որ ՀՀ նախագահը նման հայտարարություն արել էր նաև 2010թ. ԵԱՀԿ Աստանայի գագաթաժողովում և ՀԱՊԿ երկրների ղեկավարների նիստում՝ հայտարարելով, որ Ադրբեջանի ագրեսիայի շարունակության պայմաններում Արցախի դե-յուրե ճանաչումը կարող է Հայաստանի

համար լինել միակ ելքը: Փաստորեն, կարող ենք արձանագրել, որ ճանաչումը պաշտոնական Երևանի «զենքն է» ֆորսմաժորային իրավիճակում:

Կարծում ենք, որ 1994թ. հրադադարի մասին համաձայնագրի ստորագրումից ի վեր 2016թ. ապրիլը ամենանպաստավոր պահն էր Արցախը ճանաչելու համար: Այս ընթացքում հայկական կողմը շրջանառության մեջ դրեց նաև Արցախի հետ ռազմական փոխօգնության պայմանագիր ստորագրելու գաղափարը, սակայն ի վերջո պաշտոնական Երևանն այս ու նախորդ հարցում դրսևորեց մեծ զգուշավորություն՝ սահմանափակվելով միայն սպառնալիքներով[2]: Մեր կարծիքով, այդ ժամանակ հայկական կողմի բանակցային դիրքերի ամրապնդման տեսանկյունից լավագույն առաջքայլը կլիներ Արցախին բանակցությունների սեղան վերադարձնելը: Մանավանդ որ Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ Ի.Պոպովը հայտարարել էր, թե բանակցությունների ինչ-որ փուլում Արցախի ներկայացուցիչները պետք է վերադառնան բանակցությունների սեղանի շուրջ. «...չէ՞ որ խոսքն այն մարդկանց մասին է, ովքեր ապրելու են այդ տարածքում»[3]:

Ինչպես վերը նշեցինք, չճանաչված կամ միջազգային ճանաչում չունեցող պետության համար զարգացման և պետությունների ընտանիքում լիիրավ ամրագրվելու լավագույն գրավականը կարող է լինել ակտիվ արտաքին քաղաքականությունը: Արցախն ավելի քան երկու տասնամյակ որդեգրել է այդ ուղին՝ կապեր հաստատելով ինչպես չճանաչված, մասնակի ճանաչում ունեցող պետությունների, այնպես էլ միջազգային հարաբերությունների լիիրավ սուբյեկտների հետ: Թերևս, Արցախի արտաքին քաղաքականության ամենաակտիվ ուղղություններից մեկը խորհրդարանական դիվանագիտությունն է: Ներկայում Արցախն ակտիվ կապեր ունի Ֆրանսիայի, Բելգիայի և մի շարք այլ եվրոպական երկրների խորհրդարանականների հետ, ստեղծվել են միջխորհրդարանական բարեկամական խմբեր: Նման խմբեր գործում եմ Ֆրանսիայի, Լիտվայի

[2] Սերժ Սարգսյան. Անհրաժեշտ է աշխատել ԼՂՀ-ի հետ ռազմական փոխօգնության պայմանագիր կնքելու ուղղությամբ, https://news.am/arm/news/320230.html

[3] Որոշակի փուլում Ղարաբաղը պետք է վերադառնա բանակցային սեղանի շուրջ. ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, http://yerevan.today/all/politics/7443/oroshaki-pulum-gharabaghy-petq-e-veradarna-banakcayin-seghani-shurj-eahk-minski-khmbi-hamanakhagah

օրենսդիր մարմինների, Եվրախորհրդարանի հետ: Կարծում ենք՝ անհրաժեշտ է ակտիվորեն օգտագործել այս հարթակը՝ ավելի ճանաչելի դառնալու, քաղաքական նոր կապեր հաստատելու և, վերջապես, բարեկամներ ձեռք բերելու համար:

Արցախի արտաքին քաղաքականության հաջորդ կարևոր ուղղությունը չճանաչված կամ մասնակի ճանաչում ունեցող երկրների հետ հարաբերություններն են: Արցախն ակտիվ քաղաքական կապեր ունի Հարավային Օսիայի, Աբխազիայի, Մերձդնեստրի հետ: Հատկապես ակտիվ են հարաբերությունները Հարավային Օսիայի հետ, ինչի մասին են վկայում երկկողմ պաշտոնական այցերը: Թերևս, Հարավային Օսիայի և Աբխազիայի հետ ունեցած սերտ կապերն են այն հիմնական պատճառներից մեկը, որ հարևան Վրաստանն ունի կտրուկ ժխտողական դիրքորոշում Արցախի նկատմամբ: Եթե ներկայիս վարչակարգի պայմաններում պաշտոնական Թբիլիսին բավական զսպվածություն է ցուցաբերում, ապա նախագահ Մ.Սաակաշվիլու օրոք այն չէր խուսափում այդ մասին բարձրաձայնելուց: Այսպես, 2010թ. հուլիսի 30-ին ադրբեջանական *«The Business Year»* ամսագրին տված հարցազրույցում Վրաստանի այն ժամանակվա նախագահ Մ.Սաակաշվիլին ասել է հետևյալը. «Վրաստանն ու Ադրբեջանը պետք է պաշտպանեն միմյանց՝ հաշվի առնելով մեր աշխարհագրական դիրքն ու ընդհանուր պատմությունը: Մեր երկու երկրները լուրջ խնդիրներ ունեն չլուծված հակամարտությունների հետ կապված, և Ադրբեջանի ու Վրաստանի ցանկացած ընդդիմախոս մեր երկու երկրների թշնամին է»: Իսկ 2011թ. օգոստոսի 28-29-ին Բաթումում անցկացված «Ադրբեջան. պետական անկախության վերականգնման 20-րդ տարին» խորագրով համաժողովում Վրաստանի սփյուռքի հարցերով նախարար Մ.Դավիթայան իր ելույթում նշել է, որ Վրաստանը միանշանակ սատարում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը և հանդիսանում է «օկուպացված ադրբեջանական տարածքների» ազատագրման կողմնակից[4]:

Արցախը Եվրոպայում անկախության ձգտող երկրամասերից ակտիվ կապեր ունի Իսպանիայի հյուսիսում ինքնավարության կարգավիճակ ունեցող Բասկերի երկրի հետ: Կարծում ենք, որ Արցախի արտաքին

[4] ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական բաժնի նյութեր, ցուցակ 17, գործ 131, թերթ 47:

քաղաքականության թիրախային ուղղություններից մեկը պետք է լինեն Եվրամիության երկրները: Գաղտնիք չէ, որ եվրոպական երկրներն առավելապես հակված են տարածքային հակամարտությունների՝ ինքնորոշման իրավունքի իրացման ճանապարհով լուծման տարբերակին. բացառություն են կազմում այն երկրները, որոնք իրենց տարածքում ունեն նմանատիպ խնդիր: Դրա վառ վկայությունը Կոսովոյի հակամարտությունն է, թեպետ այստեղ դժվար է նժարի վրա դնել, մի կողմից, ինքնորոշման իրավունքի իրացման հարցը, իսկ մյուս կողմից՝ Արևմուտքի աշխարհաքաղաքական շահերը: Գաղտնիք չէ նաև, որ ԵՄ երկրները Արցախյան հիմնախնդրի կարգավորումը տեսնում են կառուցողական ինտեգրացիայի ճանապարհով: Ուստի, անհրաժեշտ է օգտագործել եվրոպական երկրները՝ որպես ապամեկուսացման հիմնական հարթակ: Անհրաժեշտ է գտնել ճանապարհներ ԵՄ շուկա դուրս գալու, վերջինիս հետ տնտեսական կապեր հաստատելու և զարգացնելու ուղղությամբ: Մյուս կողմից, հաշվի առնելով ԵՄ շատ երկրների նավթային կապերն Ադրբեջանի հետ՝ դեռևս դժվար է պատկերացնել կառույցի կողմից ընդհանուր դրական մոտեցում նշված հարցին, ուստի անհրաժեշտ է շեշտադրումը կատարել ԵՄ առանձին երկրների վրա:

Արցախի արտաքին քաղաքականության ակտիվացման ուղղությամբ մեծ ներդրում կարող են ունենալ վերջինիս ներկայացուցչությունները տարբեր երկրներում: Ներկայում Արցախը մշտական ներկայացուցչություններ ունի Ռուսաստանի Դաշնությունում, ԱՄՆ-ում (համատեղում է նաև Կանադայում), Ֆրանսիայում, Ավստրալիայում, Գերմանիայում, Մերձավոր Արևելքում (նստավայրը՝ Բեյրութ): Թեպետ այս վերջիններս գործում են որպես լոբբիստական կազմակերպություններ, սակայն «Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչություն» կազմակերպության ներկայությունը մի շարք խոշոր պետություններում արդեն իսկ առաջքայլ է:

Արցախի միջազգային ճանաչման հարցում մեծ գործ ունի կատարելու նաև հայկական սփյուռքը: Մինչև վերջին տարիները սփյուռքի խոշոր հայկական կազմակերպությունների գործառույթները հիմնականում սահմանափակվում էին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցով: Սակայն ժամանակի ընթացքում հայկական սփյուռքը

սկսում է ավելի պարզորոշ գիտակցել, որ Արցախյան հիմնախնդիրն առնվազն պակաս կարևոր չէ հայապահպանության և հայրենիքի պահպանության տեսանկյունից, ուստի հայկական լոբբիստական խմբերը սկսել են ակտիվորեն զբաղվալ նաև այս հիմնախնդրով, այդ թվում՝ Արցախի միջազգային ճանաչման հարցով: 2010թ. ապրիլի 26-ին Արցախի Հանրապետության արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով Հասարակական խորհուրդը նման խնդրանքով դիմել է սփյուռքի հայկական կազմակերպություններին: Կարող ենք փաստել, որ այս քաղաքականությունը տվել է առաջին պտուղները. ԱՄՆ յոթ նահանգ՝ Ռոդ Այլենդ, Մասաչուսեթս, Մեն, Լուիզիանա, Կալիֆոռնիա, Ջորջիա և Հավայներ, ճանաչել են Արցախի Հանրապետության անկախությունը: Իհարկե, ԱՄՆ սահմանադրությունը թույլ չի տալիս նահանգներին՝ ճանաչել պետություններ, ուստի սա իրավական տեսանկյունից որևէ գին չունի: Սա առավելապես քարոզչական քայլ է, որը կարող է ավելի ճանաչելի դարձնել Արցախին:

Կարևոր են նաև իսլամական աշխարհի հետ տարվող աշխատանքները: Այստեղ մեր գլխավոր հղումը պետք է անել այն բանին, որ տարբեր միջազգային հարթակներում հակահայկական բանաձևերին կողմ քվեարկելը չի նպաստում հակամարտության կարգավորմանը, ավելին՝ կոշտացնում է Ադրբեջանի դիրքորոշումը, ինչը կարող է անխուսափելիորեն բերել նոր պատերազմի: Հենց այս սցենարով էլ հայկական կողմին հաջողվեց 2010թ. ՄԱԿ-ում չեզոքացնել հերթական հակահայկական բանաձևը: Կարևոր են նաև Ադրբեջանին զինող երկրների հետ տարվող աշխատանքները, և այս հարցում հայկական դիվանագիտությունը շատ անելիքներ ունի:

Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ Արցախի Հանրապետությանը հաջողվել է մի քանի ուղղություններով զարգացնել արտաքին կապերը և որոշակի միջազգային ճանաչում ձեռք բերել: Սակայն դեռ շատ անելիք կա. իրացված չեն բոլոր հնարավորությունները, որոնք կարող են բերել Արցախի էլ ավելի մեծ ճանաչմանը: Մյուս կողմից, ինչպես նշեցինք, ճանաչման հարցն առավելապես քաղաքական հարց է, ուստի Արցախի միջազգային ճանաչման համար անհրաժեշտ է նաև բարենպաստ միջազգային քաղաքական իրավիճակ:

ԱՄՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ՇՈՒՐՋ

Վահրամ Հովյան[*]

ԱՄՆ-ը գիտատեխնոլոգիական առումով աշխարհի ամենազարգացած երկիրն է: Հետևաբար, այստեղի հայ համայնքում կենտրոնացված է զգալի գիտական ներուժ: Խոսքը վերաբերում է ինչպես հումանիտար, այնպես էլ բնագիտական ոլորտների (ինչպես անհատական, այնպես էլ ինստիտուցիոնալ մակարդակներով) հայկական գիտական ներուժին:

Ինստիտուցիոնալ մակարդակ

Հումանիտար ոլորտում ինստիտուցիոնալ մակարդակով հայկական գիտական ներուժը ներկայացնում են ակադեմիական և գիտավերլուծական ոլորտի տարատեսակ հաստատությունները: Դրանց շարքում առաջին տեղում են ԱՄՆ հայագիտական կենտրոնները: Ներկայում ԱՄՆ-ում գործում են 30-ից ավելի հայագիտական կենտրոններ[1]: Այս ցուցանիշով այդ երկիրն առաջինն է աշխարհում: Դրանք համալսարանների կառուցվածքային բաղադրիչ հանդիսացող հաստատություններ են (հայագիտական ամբիոններ, ծրագրեր և այլն), ինչպես նաև առանձին հաստատություններ: Վերջիններից նշանակալի են Զորյան ինստիտուտը (մասնաճյուղ ունի նաև Կանադայում), Վաշինգտոնի Հայոց ցեղասպանության թանգարանը, *«Washington Policy Forum Armenia»* հաստատությունը:

Պայմանականորեն հայագիտական կենտրոնների շարքին են դասվում նաև հայագիտական միությունները՝ Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցությունը (*Society for Armenian Studies – SAS*), Հայկա-

[*] «Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար, Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ:

[1] *Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.,* Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում, Եր., «Գասպրինտ», 2014, էջ 36-67, 155-160:

կան հետազոտությունների և ուսումնասիրությունների ազգային ինստիտուտը (*The National Association for Armenian Studies and Research – NAASR*), որոնք ի թիվս այլ գործառույթների՝ հովանավորում են գիտական միջոցառումներ (գիտաժողովներ, աշխատաժողովներ և այլն)[2], ինչպես նաև գիտական պարբերականները, ինչպես, օրինակ՝ Հայագիտական ընկերակցության ամսագիրը (*Journal of the Society for Armenian Studies*) և այլն:

Բացի ընդհանուր հայագիտական ուղղվածության կենտրոններից, ԱՄՆ-ում առկա են նաև նեղ մասնագիտացմամբ հայագիտական կենտրոններ, որոնք իրենց գիտահետազոտական գործունեությունն իրականացնում են որևէ նեղ գիտակարգի շրջանակներում: Այդպիսի կենտրոններից նշանակալի են Դրամագիտության և հնադարյան իրերի հայկական ընկերությունը (*ANAS*) և Դրամագիտական ուսումնասիրությունների հայկական կազմակերպությունը, որոնք մասնագիտացած են հայկական հնադարյան և միջնադարյան դրամների հավաքմամբ և ուսումնասիրությամբ[3]:

Մեկ այլ նեղ մասնագիտացմամբ հայագիտական կենտրոն է «Սալմաստ» ժառանգական միությունը, որի ուշադրության կենտրոնում Սալմաստ գավառի պատմության, մշակույթի, ազգագրության և այլնի ուսումնասիրությունն է:

ԱՄՆ հայագիտական կենտրոնները կոչված են ոչ միայն իրականացնելու գիտահետազոտական և կրթական գործունեություն հայագիտության բնագավառում, այլև համախմբելու հայության գիտական ներուժը, հատկապես ուսանողության շրջանում, և այն ուղղորդելու համազգային խնդիրների լուծմանը: Այդ կերպ նրանց ավանդական և ժամանակակից գործառույթներին[4] ավելանում է ևս մեկը՝ հայության մտավոր ներուժի համախմբումը: Օրինակ՝ Հարավային Կալիֆորնիայի համալսարանի Հայագիտական ծրագիրն ամեն տարի կազմակերպում է ԱՄՆ և Կանադայի համալսարաններում սովորող հայ ուսանողների հավաքներ՝

[2] Տե՛ս Հայագիտական Ուսմանց Ընկերակցութեան Տարեկան Հանդիպումը, http://hayernaysor.am/cl/archives/226149

[3] Տե՛ս *Ծուլիկյան Հ.,* ANAS-ը մեծարում է դրամագիտության լեգենդին, «Ազգ», 09.12.16:

[4] Հայագիտական կենտրոնների դերակատարության մասին մանրամասն տե՛ս *Հովյան Վ.,* Արտերկրի հայագիտական կենտրոնների դերակատարությունը, «21-րդ ԴԱՐ», թիվ 6, 2014, էջ 49-55:

քննարկելու նրանց կողմից առաջադրված նորարարական գաղափարները՝ Հայության առջև ծառացած մարտահրավերների լուծմանն ի նպաստ[5]:

Հայագիտական կենտրոններ չհանդիսացող հումանիտար ոլորտի հայկական գիտական կառույցների շարքին կարելի է դասել առանձին ոլորտի գիտնականներին միավորող կառույցները: Վերջինների շարքում նշանակալի են հատկապես իրավաբանության ոլորտի հայ մասնագետներին միավորող հաստատությունները: Այդպիսիք են, օրինակ, Ամերիկահայ փաստաբանների ասոցիացիան, Հայ իրավաբանական կաճառը:

Բնագիտության ոլորտի ԱՄՆ հայկական գիտական ներուժը ներկայացնող հաստատությունները համեմատաբար փոքրաքանակ են: Այդպիսի ամենանշանավոր հաստատությունը Ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների ընկերակցությունն է:

Որպես առանձին ոլորտի գիտնականներին միավորող կառույց բնագիտության ոլորտում հայտնի է, օրինակ, Ամերիկահայ ճարտարապետների միությունը: Այս տեսակի հաստատությունների շարքում, սակայն, առավել մեծ թիվ են կազմում բժշկության ոլորտի մասնագետներին միավորող կառույցները, ինչպիսիք են Հայ-ամերիկյան բժշկական միությունը (*Armenian American Medical Society*), Հայկական բժշկագիտական համայնքը (*Armenian medical scientific community - AMSC*), Առողջապահության բնագավառի ամերիկահայ արհեստավարժների կազմակերպությունը (*AAHPO*), կրճատ՝ Առողջապահության ամերիկահայ կազմակերպություն:

Հայկական գիտական հաստատությունների թվում իր ուրույն տեղն ունի նաև Ամերիկայի հայ ուսանողների միությունը: Վերջինս ավելի շատ նման է հասարակական կազմակերպության, բայց քանի որ նրա գործունեությունն անմիջականորեն առնչվում է գիտությանը, ապա այն նույնպես դասել ենք գիտական հաստատությունների շարքին: Ստեղծված լինելով 1910թ.՝ միությունը ԱՄՆ ամենահին կազմակերպություններից մեկն է: Նրա նպատակն է համախմբել այդ երկրի հայ ուսանողությանը, նպաստել նրանց կրթական և մասնագիտական առաջխաղացմանը և ապահովել նրանց կապը հայ համայնքի հետ: Այս նպատակները միու-

[5] Տե՛ս USC-ի Հայագիտականը Հայ Ուսանողներու Հաւաքներ Կը Կազմակերպէ, http://hayernaysor.am/cl/archives/225368

թյունն իրականացնում է կրթաթոշակների, ուսանողների պրակտիկանե-րի հովանավորման և այլ միջոցներով: Օրինակ՝ այն ամեն տարի կազմա-կերպում է լրագրության ոլորտի հայ ուսանողների պրակտիկա: 2017թ. վեցշաբաթյա պրակտիկան նախատեսվում էր իրականացնել *The Arme-nian Weekly* և *The Armenian Mirror-Spectator* անգլիալեզու հայկական թեր-թերում[6], որոնք ամենանշանավոր հայկական լրատվամիջոցների շարքին են դասվում ԱՄՆ-ում և Կանադայում: Այս կերպ մի կողմից միությունը նպաստում է հայ ուսանողների մասնագիտական առաջխաղացմանը, մյուս կողմից՝ խթանում նրանց կապը հայկական կառույցների հետ:

Անհատական մակարդակ

Հումանիտար ոլորտի անհատ հայ գիտնականներ առկա են ամենատար-բեր գիտակարգերում: Քաղաքագիտության ոլորտի հայ մասնագետներից կարելի է հիշատակել, օրինակ, Արման Գրիգորյանին (քաղաքագիտու-թյան դոկտոր, ԱՄՆ Լիհայի համալսարանի պրոֆեսոր), Վարդան Գրի-գորյանին («Քարնեգի» հաստատության նախագահ), Տալին Փափազյանին (Փարիզի Սիանս-Պո համալսարանի դասախոս և Հարավային Կալիֆոր-նիայի համալսարանի գիտաշխատող), Սուրեն Սարգսյանին (Թաֆթս հա-մալսարանի Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցի գիտաշ-խատող, միջազգայնագետ), Ռուբեն Շուգարյանին (նույն համալսարանի դասախոս), Ժորժ Բուրնությանին (կովկասագետ, 31 գրքի հեղինակ):

ԱՄՆ-ում հայազգի հայտնի սոցիոլոգներ են «Մերձավոր և Միջին Արևելքի ամերիկյան կենտրոն»-ի փոխտնօրեն Անի Բաքալյանը, Ֆրեզնո-յի պետական համալսարանի Սոցիոլոգիայի բաժանմունքի վարիչ Մեթ-յու Անի Ջենդյանը, Նևադայի համալսարանի (Ռենո քաղաքի) Սոցիոլո-գիայի բաժանմունքի պրոֆեսոր Պերճ Բերբերօղլուն (Բերբերյան) և այլք: Պատմության ոլորտի հայտնի հայ մասնագետներից կարելի է հիշատա-կել Արա Սանջյանին (Դիրբոռնի Միչիգանի համալսարան), Ռիչարդ Հով-հաննիսյանին (Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարան), Ժիրայր Լի-պարիտյանին (Էնն Արբորի Միչիգանի համալսարան), Ջորջ Աղջայանին

[6] Տե՛ս ASA's Sixth Annual Journalism Internship Program Set for 2017, http://hayernaysor.am/en/archives/226299

(Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության մասնագետ) և ուրիշների։ Տնտեսագիտության ոլորտում հայտնի անուն է, օրինակ, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր Տարոն Աճեմօղլուն (Աճեմյան)։ Բանասիրության ասպարեզում հիշատակման արժանի են Թալար Չահինյանը (*Talar Chahinian* – համեմատական գրականագիտության դոկտոր, Կալիֆորնիայի պետական համալսարանի Համեմատական համաշխարհային գրականության դեպարտամենտի դասախոս), Թամարա Քեթաբդյանը (Բելիոթի քոլեջի անգլիական գրականության պրոֆեսոր) և այլք։

Հումանիտար ոլորտում նշանավոր են նաև կրթության ոլորտի մասնագետ, Նորթրիջի Կալիֆորնիայի նահանգային համալսարանի Հայկական ուսումնական ծրագրի խորհրդի անդամ Հասմիկ Պարանը, հոգեբան, Կոլումբիայի համալսարանի փորձագետ Անի Քալաջյանը և ուրիշներ։

Խոսելով ԱՄՆ հայության մտավոր ներուժի մասին՝ անհնար է շրջանցել ամերիկահայ գրողներին, որոնք, մի կողմից, թեև հանդիսանում են ոչ թե գիտության, այլ մշակույթի (գրականության) ոլորտի գործիչներ, սակայն մյուս կողմից՝ նրանց ստեղծագործությունները, մեծ հռչակ վայելելով ԱՄՆ-ում, չեն կարող ինչպես չարտահայտել ԱՄՆ հասարակական կարծիքն ու տրամադրությունները, այնպես էլ չանդրադառնալ զանգվածների հոգեկերտվածքի, մտածողության վրա։ Ներկայում ամերիկահայ գրողներից նշանավոր են Փիթր Բալաքյանը, Քրիս Բոջալյանը, Հովսեփ Նալբանդյանը, Մարգարիտ Դերանցը, Դոուն Անահիտ ՄակՔինը և ուրիշներ։ Փիթր Բալաքյանը ամերիկյան հեղինակավոր Պուլիտցերյան մրցանակակիր է[7]։

Բնագիտության ասպարեզում նույնպես հայ մասնագետներ կան ամենատարբեր գիտակարգերում՝ ճարտարագիտություն, էներգետիկա, տիեզերագիտություն, ծրագրավորում, բժշկություն և այլն։ Բարձր տեխնոլոգիաների ոլորտում նշանակալի են, օրինակ, Նաիրա Հովակիմյանը (ճարտարագետ, անօդաչու թռչող սարքերի մասնագետ), Նորա Այանյանը (ռոբոտագետ, Հարավային Կալիֆորնիա համալսարանի համակարգային գիտությունների պրոֆեսորի օգնական և ավտոմատ համակարգման լաբորատորիայի տնօրեն) և այլն։

[7] Ժամանակին Պուլիտցերյան մրցանակի է արժանացել նաև Վիլյամ Սարոյանը։

Էներգետիկայի բնագավառում կարելի է հիշատակել, օրինակ, *Energy Renaissance* ընկերության գործադիր տնօրեն Կիրիլ Գիչունցին և նույն ընկերության նախագահ Հակոբ Աղանյանին: Տիեզերագիտության բնագավառում հիշատակման արժանի են ՆԱՍԱ-ի գիտաշխատողներ Վլադիմիր Այրապետյանը (աստղագետ) և Արմեն Դուրյանը: *IT* ոլորտում գործունեություն են ծավալում Ալեքսիս Օհանյանը, երիտասարդ ծրագրավորողներ Արտակ Քալանթարյանը, Սուսան Մակարյանը, Հասմիկ Քալանթարյանը, Հայկ Քալանթարյանը և ուրիշներ: Բժշկության ասպարեզում հիշատակելի անուններ են, օրինակ, Էլեոնորա Զաքարյանը (Իլինոյսի համալսարանի բժշկության քոլեջ), Վերժին Մատեյյանը (Կալիֆորնիայի նահանգային համալսարանի Ծովային ակադեմիայի (*California State University Maritime Academy – CSUM*) կենսաբանության դասախոս, Հայկական ոսկրածուծի դոնորների հիմնադրամի (ABMDR) անդամ) և այլն:

ԱՄՆ հայ համայնքի ներկայացուցիչները երբեմն շատ վաղ՝ դպրոցական տարիքում են ընդգրկվում գիտական հետազոտություններում: Ինչպես, օրինակ, ՀԲԸՄ Վաչե և Թամար Մանուկյան երկրորդական վարժարանի 2016-2017թթ. շրջանավարտ Դանիել Մուրադյանն է ընդգրկվել Կալիֆորնիայի ճարտարագիտական ինստիտուտի գիտնական, դոկտոր Ռիչարդ Գայի ղեկավարած ծրագրում, որի նպատակն է բարելավել երկրաշարժեր կանխատեսող սարքերի (*Seismometer*) տեխնիկական բնութագրիչները (բարձրացնել սարքերի կանխատեսման կարողությունը)[8]:

Համագործակցությունը Հայաստանի հետ

Գիտական ոլորտում ամերիկահայ համայնքի նպաստը Հայաստանին առայսօր իրականացվել է գիտական հաստատությունների ստեղծման և գիտական հաստատություններին նյութապես (ֆինանսապես, սարքավորումների և այլ ձևերով) աջակցության միջոցով: Գիտական կառույցների ստեղծման տեսանկյունից ամենամեծ նվաճումը թերևս 1991թ. ՀԲԸՄ, Կալիֆորնիայի համալսարանի և ՀՀ կառավարության գործակցությամբ Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնումն էր, որը ներկայում ՀՀ

[8] Տե՛ս Դանիէլ Մուրատեան Կը Մասնակցի Կեանքեր Փրկող Ծրագիրի Մը Իրականացման, http://hayernaysor.am/cl/archives/226039

ամենահեղինակավոր բուհերից մեկն է: Կարևոր ձեռնարկներ են նաև ՀԲԸՄ միջոցներով Սևանի թերակղզում Վազգենյան հոգևոր դպրանոցի հիմնադրումը 1993թ., «Ռոբերտ Բողոսյան և որդիներ» հիմնադրամի կողմից 2000թ. ՀՀ նախագահի ամենամյա մրցանակի հիմնումը գիտության և արվեստի ոլորտի նվաճումների համար և այլն:

Ինչ վերաբերում է գիտական հասատություններին նյութական աջակցությանը, ապա բազմաթիվ այդպիսի դեպքերից մեկն է 2016թ. նոյեմբերի 19-ին Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրման 25-րդ տարեդարձի կապակցությամբ Լոս Անջելեսում կազմակերպված տոնական միջոցառման ընթացքում ավելի քան $1.5 մլն-ի հանգանակությունը՝ ի նպաստ վերջինիս կրթաթոշակային ծրագրերի[9]:

Ինչ վերաբերում է բուն գիտական ներուժի ծառայեցմանն ի նպաստ Հայաստանի, ապա այս հարցում արդյունքներն ավելի նկատելի են հումանիտար, քան բնագիտական ոլորտում: Հումանիտար ոլորտում, բացի հայաստանյան գիտական կառույցների հետ համագործակցության հայտնի ձևերից (համատեղ հետազոտություններ ու գիտաժողովներ, հրատարակությունների փոխանակում և այլն), ԱՄՆ հայկական գիտական ներուժի նպաստը հայրենիքին ունեցել է նաև դրսևորման հետևյալ ձևերը.

1. *Ֆինանսական միջոցների հայթայթում գիտական նախագծերի իրականացման համար:* Խոսքը հայաստանյան գիտական կառույցների նախագծերի իրականացման համար ամերիկյան հաստատություններից ֆինանսական աջակցության ապահովման մասին է: Այդպիսի համագործակցության օրինակ է 2016թ. հոկտեմբերին Ախալցխայի Ծուղրութ գյուղի միջնադարյան Ավետարանի վերանորոգման ծրագիրը: Այն իրականացվել է Երևանի Մ.Մաշտոցի անվան Մատենադարանի կողմից: Ծրագիրը ֆինանսավորվել է Հարավային Կովկասի հետազոտությունների ամերիկյան հաստատության կողմից, որի համար դիմումը ներկայացվել է Կալիֆորնիայի համալսարանի Ֆրեզնոյի մասնաճյուղի Հայագիտական ծրագրի և Բրանդենբուրգի

[9] Տե՛ս Over $1.5 Million Raised at AUA 25th Anniversary Gala, http://hayernaysor.am/en/archives/224286; Over $1.5 Million Raised for Vital Scholarships at AUA 25th Anniversary Gala in Beverly Hills, http://hayernaysor.am/en/archives/224721

համալսարանի (Գերմանիա) մագիստրատուրայի ուսանող Արուսյակ Բալդրյանի կողմից[10]:

2. *Մասնագիտական խորհրդատվություն ՀՀ բարձրագույն պետական պաշտոնյաներին:* Այս տեսակետից ամենանշանակալի փաստերից է, օրինակ, այն, որ, Միչիգանի համալսարանի պրոֆեսոր Ժիրայր Լիպարիտյանը ժամանակին եղել է ՀՀ առաջին նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի խորհրդականը:
3. *ԱՄՆ գիտակրթական հաստատությունների հայազգի աշխատակիցների կողմից հատուկ ծրագրերի հիմնում՝ Հայաստանի համար կադրեր պատրաստելու նպատակով:* Այս առումով հետաքրքրական է Լոս Անջելեսի Հանրային ծառայության *USC Price* վարժարանի դասախոս Ֆրանկ-Վռամ Ծերունյանի՝ հատուկ Հայաստանից ընտրված թեկնածուների համար դոկտորանտուրայի ծրագրի հիմնման նախաձեռնությունը, «որպէսզի մօտիկ ապագային Հայաստան ունենայ հանրային սպասարկութեան մասնագէտ տարրերու անձնակազմ մը»[11]:

Բնագիտության ասպարեզում ԱՄՆ հայ համայնքի գիտական ներուժի նպաստը Հայաստանին առավել նկատելի է առողջապահության ոլորտում: Այն դրսևորվում է ամերիկաբնակ հայ բժիշկների այցելությամբ Հայաստան և տեղի գործընկերների հետ փորձի փոխանակմամբ, Հայաստանում բժշկական հաստատությունների հիմնմամբ, ԱՄՆ-ում հայաստանցի բժիշկների վերապատրաստման կազմակերպմամբ և այլ ձևերով:

Այլ ոլորտներում ԱՄՆ հայկական գիտական ներուժի ներգրավման խթանման տեսակետից, կարծում ենք, կարևոր նշանակություն ունի վերջինիս համագործակցությունն այդ երկրի հայկական գործարար շրջանակների հետ: ԱՄՆ հայ գործարարների կողմից ներդրումները ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության մեջ կմեծացնեն այդ ոլորտի գիտնականների պահանջարկը և կխթանեն սփյուռքի գիտական ներուժի ներգրավումը Հայաստանի զարգացման գործում:

[10] Ֆրեզնոյի Հայագիտականը Կը Մասնակցի Ծուղրութի Աւետարանը Պահպանելու Ջանքին, http://hayernaysor.am/cl/archives/226183

[11] Ֆրանք-Վռամ Ծերունեանի կողմէ պատրաստուած ծրագիր մը գործադրութեան կը դրուի Լոս Անճէլըսի մէջ. Ամերիկեան Փրայս վարժարանը Հայաստանի համար պիտի պատրաստէ հանրային ծառայութեան մասնագէտներ, «Նոր Մարմարա», 08.09.2017:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՖԻԱՅՈՒՄ՝ ԶԵՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Գեորգի Կոլարով

Անկախության ձեռքբերումից հետո Բաքուն երբեք հաշվի չի նստել միջազգային իրավունքի հետ: Եվ եթե որևէ արտասահմանյան քաղաքական գործիչ, դիվանագետ, իրավաբան, լրագրող մատնանշում է նրա սխալները, անմիջապես վերածվում է «թիվ 1 թշնամու» Ալիևների կառավարող ընտանիքի համար:

Գաղտնիք չէ, որ Ադրբեջանի Հանրապետությունը սպառազինությունների և զինամթերքի ոչ միայն խոշոր գնորդ, այլ նաև վաճառող է հանդիսանում՝ չհետևելով, սակայն, միջազգային օրենքներին: Բայց բուլղարական մամուլում վերջերս հրապարակված հոդվածն ապացուցեց, որ ադրբեջանական դեսպանություններն աշխարհում և կոնկրետ Սոֆիայում իրենց դիվանագիտական իրավասությունն օգտագործում են ահաբեկիչներին զինելու համար: Հոդվածը թարգմանվել է շատ լեզուներով և արժանացել միջազգային արձագանքման: Այն հիստերիկա է առաջացրել ափշերոնյան հանրապետության բարձրագույն քաղաքական և դիվանագիտական շրջանակներում: Իշխող կլանը հասկանում է, որ անվիճելի ապացույցներին և իրավասու միջազգային մարմիններից մեկի որոշմանը կարող են հաջորդել ձերբակալությունների միջազգային օրդերները նախագահական ընտանիքի և նրա մերձավոր շրջապատի համար: Բուլղարացի հետաքննող լրագրող Դիլյանա Գայթանջիևան հոդվածը հրապարակել է «Տրուդ» թերթում (www.trud.bg) և հանրության դատին է ներկայացրել ցնցող փաստեր ադրբեջանական *Silk Way Airlines* ավիաընկերության և ՌՕՈ-ի՝ հանցավոր գործունեությանը մասնակցության մասին (առնվազն վերջին

---

* Քաղաքական գիտությունների թեկնածու, Ժողովուրդների բարեկամության Ռուսաստանի ինստիտուտի դոկտորանտ, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի (Երևան) և Տնտեսագիտական համալսարանի (Վառնա) դասախոս:

երեք տարիների ընթացքում)՝ օգտվելով դիվանագիտական «ծածկույթից»: Խոսքը, կոնկրետ Բաքվի, բուլղարական հարավային սևծովյան Բուրգաս նավահանգստի և Սաուդյան Արաբիայի Էր Ռիադ ու Ջեդա քաղաքների միջև թռիչքների մասին է[1]: Ի վերջո, զենքն ու զինամթերքը հայտնվել են «Ալ Քաիդայի» մասնաճյուղ «Ան Նուսրա ճակատի» (Ռուսաստանում արգելված) գրոհայինների կամ աֆղան թալիբների ձեռքում[2]: Բուլղարիայից բացի զենք են արտահանել նաև հարևան Սերբիան, Ռումինիան ու Չեխիան:

Հայտնի է, որ Արևելյան Եվրոպայում այսպես կոչված «սոցիալիզմի շինարարության» ժամանակ հենց Չեխոսլովակիան, Հարավսլավիան, Ռումինիան և Բուլղարիան էին առաջ անցել իրենց «զինակից եղբայրներից» ռազմարդյունաբերական համալիրի զարգացման գործում: Նրանց արտադրանքը մատակարարվում էր սեփական և Վարշավայի պայմանագրի երկրների բանակներին, գումարած մի երկու բանակ երրորդ աշխարհից, որոնք պայքարում էին ազգային ազատագրության համար և դիմակայում էին ՆԱՏՕ երկրների, Իսրայելի, ՀԱՀ ինտերվենցիաներին: Համաշխարհային սոցիալիստական համակարգի փլուզումից հետո Վաշինգտոնի և Բրյուսելի խամաճիկները փորձեցին թուլացնել արևելաեվրոպական երկրների ռազմարդյունաբերական համալիրը: Գործարանների մի մասը փակվեց, աշխատող անձնակազմը դարձավ գործազուրկ: Ռազմական շատ ինժեներներ և ռազմագիտության մասնագետներ, աշխատանքը կորցնելով, տեղափոխվեցին այսպես կոչված «խուլիգան պետություններ», որոնք զենք արտադրող կադրերի պակաս ունեին՝ ԿԺԴՀ, Իրան, Իրաք, Լիբիա, Սիրիա, Վենեսուելա: Նրանցից ոմանք ցայսօր աշխատում են այնտեղ:

Այժմ, պարզվում է, որ Արևելյան Եվրոպայի ռազմական գործարանները նույնպես դեմ չեն վաստակել ի հաշիվ խորհրդային արտոնագրով ստեղծված ժանգոտված արտադրանքի, անգամ եթե գնորդները ԻԼԻՊ արմատական իսլամիստներն են, «Ալ Քաիդան» «Ան Նուսրա ճակատը», թալիբները և այլն:

[1] www.lragir.am/index/rus/0/right/view/57696
[2] Նույն տեղում:

Լրագրողուհին նշում է, որ, օրինակ, վաճառվում է հակատանկային РПГ-7 նռնականետը: Խոսքը խորհրդային նմուշի զենքի և զինամթերքի մասին է, որոնք ՆԱՏՕ ստանդարտներից դուրս են: Սոֆիան, Բուխարեստը, Պրահան արդեն մտել են կազմակերպություն, Բելգրադը նույնպես ձգտում է այնտեղ՝ նախագահ Ալեքսանդր Վուչիչի և վարչապետ Աննա Բրնաբիչի իշխանության գալուց հետո: Նրանք փողով ազատվում են ավելորդ զենքից (և իրենց էլ չեն մոռանում): Սևծովյան Բուրգաս նավահանգիստը, ինչպես և Բաքուն, փոխաբեռնման կետ էր հանդիսանում:

Լրագրողուհին ճշտում է, որ անանուն աղբյուրից ստացել է փաստաթղթեր: Համաշխարհային փորձագետների կարծիքով, դրանց իսկությունը կասկածներ չի հարուցում: Առայժմ այնքան էլ հասկանալի չէ, թե ում համար է աշխատում այդ անանուն աղբյուրը: Եթե Դիլյանա Գայթանջիևայի ազատումը նրա հետաքննությունը դադարեցնելու պատճառ դառնա, մենք հազիվ թե իմանանք այդ մասին: Նախ՝ Ադրբեջանի համբավն այս առումով նոր չէ և քաջ հայտնի է: Երկրորդ՝ միանգամայն բնական են Բուլղարիայի, Ռումինիայի, Սերբիայի, Չեխիայի՝ «մեկ գնդակով երկու նապաստակ խփելու» փորձերը: Մի կողմից՝ պահեստներն ու արտադրահզորություններն ազատում են ՆԱՏՕ պահանջներին համապատասխան վերակառուցվելու համար, մյուս կողմից՝ իրացնում են հին արտադրանքը, վճարում աշխատողների ուշացած աշխատավարձերը և, այդպիսով, թուլացնում սոցիալական լարվածությունն աշխատավորների ամենառարակյալ հատվածի շրջանում: Այն, որ Դիլյանա Գայթանջիևան ճիշտ նշանակետին է խփել, անմիջապես պարզ դարձավ Սոֆիայում Ադրբեջանի դեսպանատան արձագանքից. դեսպան Նարգիզ Ակիֆ Գուրբանովան նամակ հղեց բուլղարական լրատվամիջոցներին, որում կոչ էր անում իշխանություններին հետաքննություն անցկացնել տեղեկատվության արտահոսքի հետ կապված: Նա ընդունել է, որ դեսպանությունը ենթարկվել է կիբեռհարձակման և բուլղարական ինտերնետ-մատակարարին կոչ է արել հետևել այցելուների անվտանգությանը: Այսպիսով, նա ընդունել է բացահայտումների ճշմարտացիությունը[3]:

[3] Նույն տեղում:

Արդյունքում՝ Դիլյանա Գայթանջիևան ազատվեց աշխատանքից։ Թերթի սեփականատեր և գլխավոր խմբագիր Պետյո Բլիսկովը (անցումային շրջանի հայտնի և հարուստ բուլղարացի լրագրող, եղել է մի շարք թերթերի գլխավոր խմբագիր), հավանաբար, ստիպված էր դիմել իր համար դժվար այդ քայլին, որը վտանգում է սեփական և թերթի հեղինակությունը։ Հարց. ո՞վ է ստիպել նրան։ Նա շատ ազդեցիկ և ուժեղ մարդ է Սոֆիայում։

Փաստը, որ Պետյո Բլիսկովն արագ հարստացավ անցումային շրջանի սկզբում (մինչ առաջատար այլ լրագրողներ բառիս բուն իմաստով սովի էին մատնված), միանշանակ ցույց է տալիս, որ նա սերտ կապերի մեջ է բուլղարական հատուկ ծառայությունների հետ։ Այն ժամանակ նրանցից էր կախված տնաբույս միլիոնատերերի կայացումը։ Եվ թեև հիմա նա ու իր նմանները հիմնականում ինքնուրույն են դարձել, չի կարելի ասել, թե լիովին ազատագրվել են հետախուզության և հակահետախուզության գործընկերների ազդեցությունից։

Տողերիս հեղինակին ժամանակին Պետյո Բլիսկովի հետ ծանոթացրել է բուլղարական հակահետախուզության երկրորդ մարդ Ալեքսեյ Պետրովը։ Նրանք այն ժամանակ մտերիմ հարաբերությունների մեջ էին։ Դիլյանա Գայթանջիևայի խոսքերով (25.08.2017թ. «Շանթ» հեռուստատեսությանը տված հարցազրույցում)՝ նրան կանչել են հենց հակահետախուզություն և հարցաքննությունից հետո ստիպել (հավանաբար սպառնալով հետևանքներով) մինչև օրվա վերջ «Տրուդ»-ից ազատվելու դիմում ներկայացնել։ Նա արել է դա, որովհետև համոզված է եղել՝ պահանջը համաձայնեցված էր Պետյո Բլիսկովի հետ։

Տպավորում է այն, որ Դիլյանա Գայթանջիևայի ազատումն աշխատանքից տեղի է ունեցել նրա հրապարակումից մոտ 2 ամիս անց։ Այսինքն՝ խմբագրությունում և հակահետախուզությունում երկար են տատանվել, թե ինչպես վարվեն։ Եվ ի վերջո ազատել են նրան Սիրիա կատարելիք հերթական գործուղումից առաջ, որտեղ նա պատրաստվում էր հերթական մերկացնող փաստերը գտնել Արևելյան Եվրոպայի ռազմարդյունաբերական համալիրի ղեկավարների վերաբերյալ, որոնք մերձավոր և միջինարևելյան շուկայում սպառում են պահեստներում դեռևս պահպանված խորհրդային նմուշի հին զենքերը։ Ի դեպ, Գայթանջիևան

ասում է, որ աշխատանքից ազատումը չի նշանակում, թե ինքը կդադարեցնի հետաքննությունը, նա, միևնույն է, կմեկնի Սիրիա՝ նոր կոմպրոմատ որոնելու հետխորհրդային և հետսոցիալիստական նոմենկլատուրայի հանցավոր գործունեության մասին, որը ճիշտ ժամանակին հասցրեց «դեմոկրատական հագուստով» հանդերձավորվել: Հարցն այն է, թե կկարողանա արդյոք դուրս գալ Բուլղարիայից:

Ո՞վ ստիպեց Պետյո Բլիսկովին ազատել Դ.Գայթանջիևային հարցի ամենատրամաբանական պատասխանը տալիս է երևանցի սոցիոլոգ Արմինե Ադիբեկյանը: Նա կարծում է, որ ադրբեջանական դեսպանությունը Սոֆիայում ճնշում է գործադրել Բուլղարիայի Հանրապետության արտգործնախարարության վրա: Վերջինը դիմել է բուլղարական հակահետախուզությանը և պահանջել միջամտել «Տրուդ» թերթի խմբագրության աշխատանքին և ազատել տալ լրագրողուհուն: Արմինե Ադիբեկյանի կարծիքով՝ այդ միջամտությունը լիովին համապատասխանում է Բաքվում կառավարող դիկտատուրայի ահաբեկչական բնույթին: Բացի այդ, Ադրբեջանի դեսպանն այլ ընտրություն չուներ. Դ.Գայթանջիևայի հոդվածը նրան խիստ անշահավետ դրության մեջ էր դրել. հոդվածը ցույց է տվել, որ թե՛ դեսպանը, թե՛ Ալիևների ընտանիքը խառն են միջազգային օրենքներով հանցավոր համարվող գործունեությանը:

Հայ սոցիոլոգը կարծում է, որ ոչ ԱՄՆ-ում, ոչ Մեծ Բրիտանիայում, ոչ ԵՄ-ում քաղաքական գործիչները և դիվանագետները չեն կարող լրագրողների ազատել տալ աշխատանքից: Ընդհակառակը, վտանգում են հայտնվել անախորժ իրավիճակի մեջ, որովհետև նման վարքագիծը կհամարվի նշված փաստերի հաստատում: Բայց, նրա կարծիքով, Բուլղարիան ինչպես եղել, այնպես էլ մնացել է «խորհրդային 16-րդ հանրապետությունը», և այնտեղ նման բաներ պատահում են: Նա վախենում է Դիլյանա Գայթանջիևայի համար՝ նրան իսկական հերոս և պրոֆեսիոնալ համարելով:

Իրականում բուլղար լրագրողուհին զբաղվել է ոչ թե «կանացի», այլ իսկական «տղամարդկային» թեմայով: Հեղինակը լիովին համաձայն է Արմինե Ադիբեկյանի հետ, քանի որ սեփական դառը փորձն ունի՝ այդ դեսպանատան հետ կապված. դեսպան Նարգիզ Ակիֆ Գուրբանովան քանիցս սպառնացել և միաժամանակ կաշառք է խոստացել բուլղարա-

կան առաջատար լրատվամիջոցներին, որպեսզի դադարեն համագործակցել ինձ հետ, պահանջել է ինձ հեռացնել Բուլղարիայի ժուռնալիստների միությունից, հանել բոլոր հրապարակումները հայկական և արցախյան պարբերականներից և արգելել «Արևելքի սև այգին» վավերագրական ֆիլմի ցուցադրումը։

Նարգիզ Ակիֆ Գուրբանովան սպառնում է փակել տալ Բուլղարիայի համար «Հարավային գազային միջանցքը», եթե նշյալ լրագրողները շարունակեն իրենց պրոֆեսիոնալ գործունեությունը։ Նա, թերևս, չի հասկանում, որ նման պահվածքով կստիպի բուլղարական կառավարությանը՝ ամենաակտիվ ձևով աշխատել «Հարավային հոսք» նախագծի վերականգնման ուղղությամբ և երկիրը վերադարձնել ռուսական աշխարհաքաղաքական ազդեցության գոտի։ Այնքան էլ հասկանալի չէ՝ հասկանո՞ւմ են արդյոք Բաքվում, որ Սոֆիայի հետ հարաբերությունները խզելու սպառնալիքները շահավետ են միայն Մոսկվայի ու բուլղարա-ռուսական բարեկամության համար։ Կարծեմ թե՝ ոչ։

Երեք պետություն կա, որոնց չի բավարարում «Հարավային գազային միջանցքը»՝ Ռուսաստանի Դաշնություն, Հայաստանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն։ Առաջինին՝ որովհետև ռուսաստանյան գազային մատակարարումները մրցակից կունենան, և այդ ժամանակ, հավանաբար, ստիպված կլինեն իջեցնել գինը։ Երկրորդին և երրորդին՝ որովհետև այդպիսով Ադրբեջանի Հանրապետությունը կկարողանա կանխել վերահաս տնտեսական ճգնաժամը և նորից գնել արդիական և որակյալ սպառազինություն՝ հայկական երկու բանակների դեմ պատերազմ վարելու համար։

Այնպես որ, Բաքվում պետք է լավ մտածեն «Հարավային գազային միջանցքը» փակել տալուց առաջ։ Դրանից կտուժի առաջին հերթին Ադրբեջանը։ Բայց Ադրբեջանում դրա մասին չեն մտածում, հավանաբար՝ որովհետև Ափշերոնում հիմա դրա ժամանակը չունեն. եթե Ինտերպոլը, Եվրոպոլը, ՄԱԿ-ը, ԵԱՀԿ-ն, Միջազգային դատարանը հաստատեն Դիլյանա Գայթանջիևայի հոդվածում գրվածը, Ադրբեջանի Հանրապետությունը կդառնա մարգինալ պետություն, նրա էլիտան կկործանվի, երկի-

ը կհայտնվի միջազգային մեկուսացման մեջ: Ընդ որում՝ թե՛ Մոսկվայի, թե՛ Վաշինգտոնի ու Բրյուսելի կողմից: «ԻԼԻՊ-ի դեմ մեծ կոալիցիան» կշրջվի Բաքվի դեմ:

Դ.Գայթանջիևան երկյուղում է, որ այս և նրա մյուս հրապարակումները կհանվեն «Տրուդ»-ի կայքից (www.trud.bg): Բայց այն արդեն պահպանվել և թարգմանվել է: Այնպես որ, ինֆորմացիան կմնա: Եվ հակառակ բուլղարական հակահետախուզության և ԱԳՆ այսօրվա ղեկավարների ջանքերի՝ այդ ինֆորմացիան Բաքվում կառավարողների հանցավոր գործունեության մասին արդեն հայտնի է աշխարհին: Եվ վաղ թե ուշ շահագրգիռ միջազգային իրավական կառույցները կհետաքրքրվեն դրանով: Մանավանդ որ հոդվածում գրվածը լոկ «սառցաբեկորի գագաթն» է: Գուցե սա էլ ստիպել է Պետյո Բլիսկովին դիմելու փոխզիջումային քայլերի և հաշտեցման հայտարարությունների, ինչը երևում է սկանդալային www.afera.bg (Վառնա) կայքին տված հարցազրույցում[4]: Այդ հարցազրույցն առաջ է բերել հարուստ լրագրողի հանդեպ թե՛ ծիծաղ, թեծ վրեժի զգացողություն վառնացիների շրջանում: Հարցազրույցում նա պնդում է, որ լրագրողուհուն չի ազատել հետաքննություն անցկացնելու պատճառով, ընդհակառակը, պաշտպանում է նրան և կանգնած է նրա թիկունքին: Մանավանդ որ նա ինքն է լրագրողուհուն Սիրիա ուղարկել: Լրագրողուհին պետք է դիմեր իրեն ոստիկանության կամ հատուկ ծառայությունների հետ խնդիր ունենալու դեպքում, որովհետև, որպես գլխավոր խմբագիր, նա պետք է պաշտպաներ նրան ցանկացած պարագայում[5]: Պետյո Բլիսկովն իբր չէր էլ իմանում, որ բուլղարական հակահետախուզությունը ստուգում էր հետաքննությունը: Եվ շատ էր զարմացել, թե ինչու Գայթանջիևան իրեն չի տեղեկացրել, այլ անմիջապես այդ մասին գրել է իր ֆեյսբուքում[6]: Ըստ Բլիսկովի՝ լրագրողուհին ազատման դիմում է ներկայացրել դեռևս հուլիսի սկզբին: Եվ դա կապված չէր հետաքննության հետ, այլ հիմնված էր պրոֆեսիոնալ պատճառների վրա: Նա ընդգծել է, որ ցայժմ ոչ մեկին չի ազատել և ոչ մեկին չի պատրաստվում ազա-

[4] www.afera.bg/вестник-труд-не-е-уволнил-диляна-ra.htlm
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:

տել հատուկ ծառայությունների ճնշման ներքո[7]։ Նա ակնարկել է, թե «Տրուդ» թերթում աշխատանքի երեք տարիների ընթացքում դա միակ հետաքննությունն էր, որն իրականացրել է լրագրողուհին։ Բայց քչերն են հավատում նրա արդարացումներին։

Գայթանջիևան շուտով նոր աշխատանք կգտնի, բուլղարական կամ արտասահմանյան ԶԼՄ-ում։ Տողերիս հեղինակը՝ նույնպես, եթե որոշ լրատվամիջոցներ սպառնալիքի ներքո դադարեն համագործակցել նրա հետ։ Ի դեպ, նման սպառնալիքներ և նախազգուշացումներ արդեն եղել են, թե, իբր, «եթե անմիջապես չդադարես զբաղվել այս թեմայով, ոչ միայն այլևս չես գրի, այլև քեզ Բուլղարիա էլ չեն թողնի»։ Բայց դեսպան Նարգիզ Ակիֆ Գուրբանովան շատ վատ դիվանագիտական համբավ ունի։ Եվ երբ նրա մանդատը Սոֆիայում ավարտվի, հազիվ թե այլ երկրի հավատարմագիր ստանա։ Թուրքիայից ու Հյուսիսային Կիպրոսից բացի։ Նրա գլխավոր գործն այն է, թե ինչպես կգնահատեն իր դժվարին աշխատանքը Բաքվի տերերը։ Ուստի, մինչև իր՝ Սոֆիայում գտնվելու ժամկետի ավարտը դեռևս պետք է շատ ջանքեր գործադրի։

[7] Նույն տեղում։

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

Նշումների համար

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 26.09.2017թ.
Թիվ 7 (86), 2017թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում